



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz
GIZ - German
International
Cooperation
GmbH



GREEN
CLIMATE
FUND




Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման խրախուսման մեխանիզմների կիրառման ներուժի գնահատում

ՆԱԽԱԳԻԾ

Ծրագրի անվանում

Հայտնաբերված բացեր և բարեփոխումների հնարավոր տարբերակներ՝ բարելավելու
բնապահպանական վճարները (ջրառի վճարներ) և տնտեսական մեխանիզմները՝
Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման ֆինանսական խթաններ ստեղծելու
համար



Հաշվետվությունը պատրաստեց «ԻՆՎԱՅՆԸՐՄԵՆԹ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն

Օգոստոս, 2022

ՄԱՉԾ պատվերով

Երևան, Հայաստան

Բովանդակություն

Օգտագործված հասցավումներ 3

Միջազգայնորեն ընդունված Տերմիններ եւ սահմանումներ 4

Անփոփագիր..... 5

Ներածություն..... 7

Գլուխ 1՝ Բնօգտագործման վճարները (Ջրօգտագործման վճարներ) եւ ջրի կառավարման տնտեսական մեխանիզմները Հայաստանում 12

1.1. Բացթողումներ եւ խոչընդոտներ 13

1.2. Ներկայիս բնօգտագործման վճարների բարեփոխումների տարբերակներ 15

Գլուխ 2՝ ՀՀ-ում ջրօգտագործման վերաբերյալ ազգային քաղաքականությունը, իրավական ու ինստիտուցիոնալ կարգավորումները՝ երկրորդական ջրօգտագործման շեշտադրումով..... 17

Գլուխ 3՝ միջազգային հաշտված փորձը իրավական եւ ինստիտուցիոնալ կարգավորումների վերաբերյալ..... 22

3.1. Գործող իրավական դրույթներից և ուսումնասիրված միջազգային հաշտված փորձից քաղված դասեր 37

Գլուխ 4՝ Ջրի երկրորդական (Կրկնակի) օգտագործման վերաբերյալ առաջարկություններ 40

4.1. Չկնարուծարաններ..... 40

4.2. Արդյունաբերություն, մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտ 44

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳ – Արևելյան գործընկերություն

ԱԶԲ – Ասիական Չարգացման Բանկ

ԱՄՆ ՄԶԳ – Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն

ԵՄ – Եվրոպական Միություն

ԸԻ - ընդերքօգտագործման իրավունք

ԿԶՆ – կայուն զարգացման նպատակներ

ՀԸԳՀ - Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀԲ - Համաշխարհային բանկ

ՄԱԶԾ - Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՇՄԱԳ - Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄՆ – Շրջակա միջավայրի նախարարություն

ՋԹ - ջրօգտագործման թույլտվություն

ՋՇԴ - Ջրի շրջանակային դիրեկտիվ

ՋՇՑ – Ջրի շահագործման ցուցիչ

ՋՌԿ - Ջրային ռեսուրսների համայնի կառավարում

ՏԶՀԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության

ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Տերմին	Սահմանում
Ջրային ռեսուրսների երկրորդային օգտագործում	Կեղտաջրերից ստացված ջուրը (օրինակ՝ ջրի մաքրման կայանից արտահոսքը կամ կոյուղաջրերի տեղային մաքրման համակարգը), հեղեղաջրերն ու անձրևաջրերը: Այս տերմինը չունի լայն կիրառելիություն: ¹ Փոխարենը, միջազգային իրավունքի և գրականության մեջ հանդիպում են «վերամշակված» և «վերօգտագործված» տերմինները:
Ջրային ռեսուրսների կրկնակի/բազմակի օգտագործում	Տերմինի նման կամ այլընտրանքային սահմանում չկա: Միջազգային գրականությունը կիրառում է ջրամատակարարման բազմակի և/կամ կրկնակի աղբյուրներին, սակայն տերմինը չի օգտագործվում՝ որպես երկրորդային ջրօգտագործման այլընտրանք:
Ջրի վերօգտագործում	Տերմինը հայտնի է նաև ջրի վերամշակում (recycled, reclaimed) տերմինով: Ջրի վերօգտագործումը ենթադրում է ջրի վերամշակում տարբեր աղբյուրներից, ապա՝ շահավոտ նպատակներով վերօգտագործում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը և ոռոգումը, խմելու ջրի մատակարարումը, ստորերկրյա ջրերի համալրումը, արդյունաբերական գործընթացները և շրջակա միջավայրի վերականգնումը: Ջրի վերօգտագործումը կարող է այլընտրանքներ ապահովել առկա ջրամատակարարման համար և օգտագործվել ջրի անվտանգությունը, կայունությունն ու ճկունության բարելավելու համար:
«Վճարում աղտոտողը» սկզբունք	Է Սա պարզ սկզբունք է, որի հիմքում ողջախոհությունն է. Աղտոտողը (կարող են լինել աղտոտման պատճառ հանդիսացող թե՛ դերակատարները, թե՛ գործունեությունը) պետք է վճարի հասցրած վնասը փոխհատուցելու համար: Սկզբունքը կարող է նաև ենթադրել աղտոտված տարածքի մաքրումը կամ տուժած մարդկանց առողջական ծախսերի փոխհատուցումը:
Վերամշակված ջուր	Բարձր մակարդակի մաքրված կեղտաջրեր են, որոնց ֆիտրումն իրականացվել է պինդ մարմինների և այլ կեղտերը հեռացնելու համար, ինչպես նաև ախտահանել ջրի մաքրման կայանի կողմից: Ստացված է տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են կենցաղային կոյուղաջրերը, արդյունաբերական կեղտաջրերը և անձրևաջրերի արտահոսքը: Վերամշակված ջրի որակը կախված է ջրի աղբյուրից և մաքրման մակարդակից: Վերամշակված ջրի համար օգտագործվում են նաև մի

¹ https://www.environment.act.gov.au/water/water-strategies-and-plans/secondary_water_use

	քանի այլ տերմիններ, այդ թվում՝ արտահոսող ջուր, մաքրված արտահոսող ջուր և մաքրված կոյուղաջուր: Խմելու ջրի հետ համեմատած՝ վերամշակված ջուրը հաճախ պարունակում է ավելի շատ ընդհանուր լուծված աղեր և սնուցիչներ, ինչը սահմանափակում է դրա օգտագործումը լանդշաֆտային կայուն ոռոգման կամ ստորերկրյա ջրերի ջրաբեր հորիզոնները համալրելու համար:
Նպատակին համապատասխան բնութագրեր (Fit-for-purpose specifications)	Մրանք մաքրման պահանջներն են՝ որոշակի աղբյուրից ջուրն անհրաժեշտ որակին հասցնելու, հանրային առողջությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը կամ օգտագործողների հատուկ կարիքներն ապահովելու համար: Օրինակ՝ մշակաբույսերի ոռոգման համար վերամշակված ջուրը պետք է լինի բավարար որակի՝ բույսերին և հողին չվնասելու, սննդամթերքի անվտանգությունը պահպանելու և ֆերմերային աշխատողների առողջությունը պաշտպանելու համար: Եթե կա մարդկանց ավելի մեծ ազդեցություն, ապա ջուրը կարող է ավելի բարձր մակարդակի մաքրում պահանջել:
«Օգտատերը վճարում է» սկզբունք	Աղտոտողը վճարում է սկզբունքի վարիացիա, որը դեպքում բնական ռեսուրս օգտագործողը փոխհատուցում է բնական կապիտալի արժեքի նվազեցման ծախսերը:
«Հրամայել և հսկել» քաղաքականություն	Տերմինը վերաբերում է բնապահպանական քաղաքականությանը, որի հիմքում, ի տարբերություն ֆինանսական խթանների վարչարարական կարգավորումն է (թույլտվություն, արգելք, ստանդարտ սահմանում և կիրարկում):

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն գեկույցը ներկայացնում է Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման ֆինանսական խթաններ ստեղծելու համար հայտնաբերված բացերը և բարեփոխումների հնարավոր տարբերակները՝ բարելավելու տնտեսական մեխանիզմները, ինչպիսիք են ջրօգտագործման վճարները ինչպես նաև անդրադառնում է կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի վերանայման արդյունքներին, Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման գործընթացի դյուրացման վերաբերյալ երկրում և միջազգային մակարդակում վերջին զարգացումներին՝ մշակված քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ թերությունների, տնտեսական խոչընդոտների և ռիսկերի շեշտադրումով:

Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնադրույթներն ամրագրված են ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության ազգային օրենսդրությունում և վավերացված միջազգային փաստաթղթերում: Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին ՀՀ օրենքը մասնավորապես մատնշում է, որ ջրային ռեսուրսների կառավարման նպատակը «ներկայում և ապագայում մարդու

բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի եւ որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է»:

Ըստ ՀՀ ջրային օրենսգրքի 17 հոդվածի, ջրային ռեսուրսների կառավարումը պետք է հիմնված լինի Ջրավազանային կառավարման պլանավորման միջոցով հավասարակշռելու ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 37 հոդվածի ջրօգտագործումը պետք է լինի ողջամիտ և հիմնավորված, իսկ ըստ 37 հոդվածի Ջրային համակարգերի օգտագործումը պետք է ապահովի արդյունավետ ջրօգտագործումը: Վերոհիշյալ խնդիրների համար կարևոր է երկրորդկան ջրօգտագործման իրականացումը այն ոլորտներում, որտեղ դրա անհրաժեշտությունը՝ կապված որոշակի առանձնահատկություններից ակնառու է:

Կախված Հայաստանում ջրային ռեսուրսների աշխարհագրորեն և ժամանակային առումով անհամաչափ բաշխումից, ինչպես նաև կլիմայի փոփոխության տեսակետից խոցելիության աստիճանից՝ երկրորդային ջրօգտագործումն արդեն իսկ հրատապ է դառնում մասնավորապես Արարատյան դաշտում ոռոգման խնդիրների լուծման և արդյունաբերության, մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտի կողմից ջրօգտագործման ծավալների մեծացման, աղտոտող նյութերի քանակների ավելացման և արտադրական պրոցեսների կանխատեսելիության տեսակետից:

Սույն զեկույցը ամփոփում է կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի վերանայման արդյունքները, երկրում ու միջազգային մակարդակով վերջին զարգացումները՝ կենտրոնանալով մշակված քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ թերությունների, տնտեսական խոչընդոտների և ռիսկերի վրա՝ կապված Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման գործընթացի դյուրացման հետ:

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի, Հայաստանը համարվում է ջրային ռեսուրսների ճնշման բարձր ելակետային դիրք ունեցող երկիր, և ՄԱԿ-ի անդամ 193 երկրների շարքում 34-րդն է՝ ջրի սակավության գործոնով: Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՁՀԿ/OECD), Հայաստանն ունի ջրի սակավ հասանելիություն և 45%-ով ավելի ջրի պահանջարկ, քան վերջինիս ռեսուրսներն են՝ ըստ Ջրի շահագործման ցուցիչի (Water Exploitation Index):

Ջրային ռեսուրսների պատշաճ կառավարումը հիմնային է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցում: Երկրին հասանելի ջրային ռեսուրսները հաշվի առնելով՝ Հայաստանը ունի բավարար ներուժ տարեկան ապահովելու մեկ շնչի հաշվարկով մոտ 3,100 մ3 ջուր: Այնուամենայնիվ, այս ջրային ռեսուրսները հավասարաչափ կերպով չեն բաշխված տարածաժամանակային տիրույթում: Գետերի հոսքի ժամանակավոր տատանումները լուծելու համար երկիրը կառուցել է 87 ջրամբար՝ 1,4 միլիարդ խորանարդ մետր ընդհանուր հզորությամբ: Այս ջրամբարների մեծ մասն ունեն մեկ գործառույթ՝ ռոտզումբ: Միջին հաշվով Հայաստանի մեկ շնչին բաժին ընկնող պահեստային հզորությունը կազմում է մոտ 450 մ³, ինչը ցածր է համարվում կիսաչորային երկրի համար:

Համաձայն ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան կլիմայի փոփոխությունների մասին 4րդ ազգային հաղորդակցության հաշվետվության², քաղցրահամ ջրի ընդհանուր օգտագործման շուրջ 88%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսական գործունեությանը, իսկ այս նյութի քաղցրահամ ջրի օգտագործման ամենից մեծ բաժինը հասնում է (57% ռոտզման համար): Մնացած 43%-ն օգտագործվում է կոմունալ, արդյունաբերական ջրամատակարարման, ձկնաբուծության և այլ ոլորտներում:

2019թ.-ի դրությամբ ռոտզման նպատակով տարեկան օգտագործվել է մոտ 1069,5 մլն մ3 ջուր, իսկ ձկնաբուծության համար՝ 754,3 մլն մ3 : Տարեկան ջրառը տատանվում է 2.5 մլրդ մ3 ծավալների շուրջ և 2020 թվականին կազմել է 2.83 մլրդ մ3 (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1՝ Ջրառը Հայաստանում, մլն մ3

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ընդամենը	2 438.3	2 941.22	2 955.12	2 860.53	2 271.73	181.92	2 865.42	2 714.42	2 865.42	2 829.8

Ստորերկրյա ջրային ռեսուրսները կարևոր դեր են խաղում Հայաստանի ընդհանուր ջրային պաշարում: Ստորերկրյա ջրերն են օգտագործվում երկրում խմելու նպատակով օգտագործվող ջրի մոտ 96%-ի և ջրառի մոտ 40%-ի ապահովման համար (Աղյուսակ 2): ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալների համաձայն՝ 2020 թվականի դրությամբ ջրային մարմիններ թափվող կեղտաջրերի ծավալը կազմում է 777,1 մլն մ3, որից 214,8 մլն մ3-ը՝ առանց բավարար մաքրման:

² https://unfccc.int/sites/default/files/resource/NC4_Armenia_.pdf

Երկրում կեղտաջրերի մոտ 80-90%-ը չի հավաքվում և վերաօգտագործվում: Առանց առողջական ռիսկերի վերահսկման, չմաքրված կեղտաջրերը երբեմն օգտագործվում են ոռոգման համար, հատկապես Արարատյան դաշտում: Այս իրավիճակը ավելի է բարդանում արդյունաբերական կեղտաջրերի արտահոսքի վերահսկման ու կարգավորման բացակայության պատճառով. շատ արդյունաբերական կամ առևտրային կառույցներ միացված չեն կոյուղու ցանցերին և չֆիլտրված կոյուղաջրերը թափում են ջրային մարմիններ: Ըստ ՏՀԶԿ-ի, եթե ջրի շահագործման ցուցիչը 40%-ից բարձր է, ապա համարվում է, որ ջրային ռեսուրսների վրա կա ճնշում:

Աղյուսակ 2՝ Քաղցրահամ ջրառ (մակերևութային և ստորերկրյա ջրեր)

ըստ ցուցանիշների և տարիների

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ընդհանուր քաղցրահամ ջրառ, մլն. խորանարդ մետր	2 126.4	2 438.32	2 941.22	2 955.12	2 860.33	2 271.73	1 181.92	865.42	714.42	865.42	829.8
Մակերևութային քաղցրահամ ջրառ, մլն. խորանարդ մետր	1 250.6	1 435.51	1 626.81	1 606.41	1 548.31	1 967.32	1 045.61	710.91	522.81	571.11	441.3
Ստորերկրյա քաղցրահամ ջրառ, մլն. խորանարդ մետր	875.8	1 002.81	1 314.41	1 348.71	1 312.01	1 304.41	1 136.31	1 154.51	1 191.61	1 294.31	1 388.5
Վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսներ, մլն. խորանարդ մետր	8 681.0	9 285.05	8 222.06	8 379.05	8 532.06	8 441.06	8 882.04	6 663.06	6 571.44	6 389.05	7 713.2
Ջրի շահագործման ցուցիչ (WEI, LTAA), %1	27.4	31.4	37.9	38.0	36.8	42.1	41.0	36.9	34.9	36.9	36.4
Ջրի շահագործման ցուցիչ (WEI, տարեկան), %2	24.5	26.3	50.5	46.3	51.7	50.8	46.2	61.4	41.3	65.3	49.5

Ըստ Հայաստանի վիճակագրական ծառայությունների տեղումներ-գոյորշիացում մոդելավորման վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսները կազմում են 5.7 մլրդ մ3 (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3՝ Ջրամատակարարումը Հայաստանում

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Տեղումներ	19 447.0	19 579.0	15 997.0	16 310.0	16 493.0	18 506.0	19 012.0	14 335.0	18 059.0	13 371.0	16 032.0

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ընդհանուր գոյորշիացում	12 549.0	11 066.0	10 816.0	10 773.0	11 432.0	12 827.0	12 928.0	10 382.0	12 120.0	10 285.0	11 261.0
Ներքին հոսք	6 898.0	8 512.0	5 181.0	5 537.0	5 061.0	5 678.0	6 084.0	3 953.0	5 939.0	3 086.0	4 771.0
Հարևան երկրներից ներհոսող մակերևութային և ստորերկրյա ջրեր (ներհոսք)	1 783.0	773.0	641.0	842.0	471.0	763.0	798.0	710.0	632.4	1 303.0	942.2
Վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսներ	8 681.0	9 285.0	5 822.0	6 379.0	5 532.0	6 441.0	6 882.0	4 663.0	6 571.4	4 389.0	5 713.2

Ըստ ՏՉՀԿ-ի Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման տնտեսական մեխանիզմների բարեփոխումների խթանման հաշվետվության (2014թ.), տնտեսական մեխանիզմների բարեփոխման հիմնական նպատակները պետք է հիմնված լինեն ՏՉՀԿ սկզբունքների վրա, համաձայն որի ջրային ռեսուրսների կառավարման ֆինանսավորման համար «վճարում է աղտոտողը» և «վճարում է օգտագործողը»: Թեև ՀՀ ջրային օրենսգիրքը և ՀՀ հարկային օրենսգիրքը նույնպես առաջնորդվում են սկզբունքներով, «օգտագործողը վճարում է» սկզբունքը դեռևս ամբողջությամբ չի գործում Հայաստանում: Լրացուցիչ վերլուծություններ են անհրաժեշտ՝ Հայաստանում ջրի վերաօգտագործման կիրառելի խթանման մեխանիզմների ներդրման համար լավագույն մոտեցումները վերհանելու նպատակով:

Համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի (17.08.2021 ՀՕ-322-Ն 12), 2021 թվականին լճից տարեկան առավելագույն ջրառը 170 մլն մ3-ից հասել է 245 մլն մ3-ի՝ ոռոգման ջրի պահանջարկի ավելացման պատճառով: Այսպիսով, ջրի կրկնակի (երկրորդային) օգտագործումը կնվազեցնի ճնշումը Սևանա լճի վրա և կնպաստի լճի էկոհամակարգի վերականգնմանը: Սակայն կլիմայի փոփոխության ազդեցության ներկայիս սպառնալիքը լուրջ խնդիրներ է ստեղծում Հայաստանում ջրային ռեսուրսների պահպանման համատեքստում:

Հայաստանը համարվում է կլիմայի փոփոխության տեսակետից տարածաշրջանի ամենախոցելի երկրներից մեկը և երկրի բնական ռեսուրսները վտանգված են թերի կառավարման ու գերօգտագործման պատճառով: Ըստ Համաշխարհային բանկի 2021 թվականի «Երկրի բնութագիրը՝ ըստ կլիմայական ռիսկի» զեկույցի. «Հայաստանում ջրային ռեսուրսների առկայության հետագա փոփոխության ճշգրիտ հետազոտման անորոշ է, և ակնկալվում է, որ գետերի հոսքերը կտրուկ կնվազեն: Թեև տարբեր են ավազանների և ջրբաժանների խոցելիության աստիճանները, մինչև 21-րդ դարի վերջը «վատագույն սցենարի»

դեպքում գետերի հոսքի միջին նվազումը գնահատվում է 39%: Այս փոփոխությունները զգալի ազդեցություն կունենան Հայաստանի լճերի և ջրամբարների մակարդակների վրա, որի հետևանքները կազդեն նաև հասարակության վրա (ձկան պաշարների նվազում, ջրի մակարդակի ու ջրի որակի անկում)»:³

Հայաստանում ջրային ռեսուրսների խոցելիությունը հաստատվում է նաև EU4Climate ծրագրով: «Կլիմայի փոփոխությունը մեծացնում է Հայաստանի խոցելիությունը՝ ծայրահեղ եղանակային պայմանների, անապատացման և հողերի դեգրադացիայի աճով պայմանավորված: Առավել խոցելի ոլորտներն են գյուղատնտեսությունը, հանրային առողջապահությունը, ջրային ռեսուրսները, անտառային տնտեսությունը, տրանսպորտը և էներգետիկ ենթակառուցվածքները»:⁴ Չերմաստիճանի աճը և տեղումների քանակի նվազումը գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքներն են, որոնք հիմք են տարբեր միջազգային կազմակերպությունների համար կանխատեսելու ջրի սակավությունը: Միջազգային գործընկերներն ու փորձագետները շեշտում են ջրային ոլորտում երկրի և հատկապես Արարատյան դաշտավայրի տազնապալի իրավիճակը:

«Հայաստանի Արարատյան դաշտը, 1,177 քառակուսի կիլոմետր մակերեսով հողատարածք է, որը գտնվում է Արարատի և Արմավիրի մարզերում: Այն կրիտիկական արտեզյան ջրաբեր հորիզոնների բնօրրան է և երկրի տնտեսական կայունության առանցքային նշանակություն ունի: Ջրաբեր հորիզոնները հանրային ծառայությունների, գյուղատնտեսության և ձկնաբուծության, ինչպես նաև Հայաստանի ստոմակայանի հովացման համար հաճախ օգտագործվող ռեսուրս են: Այնուամենայնիվ, դաշտը խիստ խոցելի է կլիմայի փոփոխության համատեքստում և վերջին 60 տարիների ընթացքում այստեղ ավելի շոգ և չոր են ամառները: ԱՄՆ ՄՁԳ/Հայաստանն իր «Առաջադեմ գիտություն և գործընկերություն հանուն ռեսուրսների ինտեգրված զարգացման» (ASPIRED) ծրագրի միջոցով օգնել է առաջնահերթություն տալ Հայաստանի ազգային նպատակին՝ պաշտպանելու երկրի արտեզյան ջրաբեր հորիզոնները, խոցելի են ամբողջ երկրում առկա ջրային սթրեսի մարտահրավերների համատեքստում»:⁵

Ինչպես նշված է ՀՀ կառավարության կողմից ՄԱԿ կլիմայի կոնվենցիայի քարտուղարություն ներկայացված Հայաստանում կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության մեջ. «Հայաստանում ողջ ջրային ռեսուրսները բավարար են տարեկան մեկ շնչին մոտ 3100 մ3 ջուր մատակարարելու համար: Գետերի հոսքի սեզոնային և տարեկան զգալի տատանումների պատճառով ջրային ռեսուրսների ժամանակային և տարածական բաշխումը չափազանց անհամաչափ է»:⁶ Այս գեկոլոյցում շեշտվում է նաև հետևյալը. «Գետերի հոսքի սեզոնային տատանումների խնդիրը կարգավորելու համար Հայաստանում կառուցվել է 1,4 մլրդ մ3 ընդհանուր ծավալով 87 ջրամբար: Հայաստանում մեկ շնչին բաժին հաստող ջրի պաշարի միջին ծավալը մոտ 465 մ3 է, ինչը համարվում է ցածր ցուցանիշ կիսաչորային կլիմայական պայմաններ ունեցող երկրի համար:

Համեմատած հարևան երկրների հետ՝ Հայաստանի ջրամբարների ծավալը մոտ է Իրանին, բայց զգալիորեն ցածր է Վրաստանի, Ադրբեյջանի կամ Թուրքիայի ջրամբարային ծավալներից: Ստորերկրյա ջրային ռեսուրսները կարևոր դեր են խաղում Հայաստանի ընդհանուր ջրային

³ <https://www.adb.org/sites/default/files/publication/709836/climate-risk-country-profile-armenia.pdf>

⁴ <https://eu4climate.eu/armenia/>

⁵ <https://www.climatelinks.org/blog/armenians-address-water-vulnerabilities-head>

⁶ https://unfccc.int/sites/default/files/resource/NC4_Armenia_.pdf

պաշարի համար: Խմելու ջրի մոտ 96%-ը և ընդհանուր ջրառի ավելի քան 40%-ը կազմում են ստորերկրյա ջրերը: Ոռոգման ոլորտը շարունակում է մնալ Հայաստանի ջրի ամենամեծ սպառողը»:⁷

Ջրային ռեսուրսների անհամաչափ բաշխվածության պատճառով մաքուր ստորերկրյա ջրերը հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով, իսկ մի շարք դեպքերում՝ որոշ շրջաններում, բավարար ջրային ռեսուրսների բացակայության պատճառով կոյուղաջուրն օգտագործվում է ոռոգման նպատակով՝ առանց պատշաճ գտման և մաքրման: Այս խնդիրն անտեսված և չուսումնասիրված է, ինչն իր հերթին կարող է հանգեցնել հանրության առողջական խնդիրների և հողի որակի ակնման:

Երկրում կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների արագ աճը և բնական ռեսուրսների նվազումը պահանջում են բոլոր ներգրավված կողմերի աչալրջությունը, և բոլոր համայնքներում պետք է կիրառվի շարունակական մոնիտորինգ և վերահսկողություն ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման համար:

Հաջորդող գլուխները վերլուծում են Հայաստանում ջրային ոլորտը կարգավորող քաղաքականությունը, օրենքները, հարկերը և ոլորտի կառավարման խնդիրները: Սույն գեկույցը նպատակ ունի հնարավոր լուծումներ առաջարկելու Հայաստանում ջրի վերաօգտագործման հնարավորություններին՝ կետրոնանալով երկու առավել խոցելի ոլորտների վրա՝ որպես իրավիճակի փորձնական ուսումնասիրության առարկա:

Ինչպես նշվել է վերևում, այդ ոլորտներն են ձկնաբուծության հետևանքով Արարատյան դաշտի արտեզյան ավազանի ջրերի երկրորդական օգտագործումը ոռոգման նպատակով և արդյունաբերության՝ մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտի ջրերի կրկնակի օգտագործումը: Նշված ոլորտները ընտրվել են փորձագիտական գնահատումների հիման վրա՝ որպես առավել խոցելի և օգուտ-ծախս վերլուծության տեսակետից առավել նպատակային:

Հեռանկարում, երկրորդական և կրկնակի ջրօգտագործումը կարող է կիրառելի լինել առավել շատ ոլորտների, մասնավորապես կոմունալ-կենցաղային ջրահեռացման դեպքում, սակայն այս պահին նման միջոցառումները ենթադրում են հսկայական ֆինանսական ծախսեր և տնտեսապես արդարացված չեն և հաշվի առնելով, որ ոռոգման ջուրը ջրօգտագործման միությունները (ՋՕ) կարող են վաճառել առավելագույնը 11 դրամով, նման միջոցառումները կբերեն պետական բյուջեի հսկայական ծախսերի և սուբսիդիաների ավելացման, իսկ սուբսիդիաների բացառման դեպքում զգալիորեն կթանկացնեն արտադրվող արտադրանքի արժեքը:

Օրինակ ԱՄՆ ՄՁԳ մաքուր էներգիա և ջուր ծրագրի շրջանակներում՝ Գեղարքունիքի մարզում կառուցված մաքրման կայանների ծախսերի հիման վրա հաշվարկվել էր Սյունիքի մարզում կեղտաջրերի մաքրման կայանների և կոյուղատարերի կառուցման ծախսերը, որը առանց շահագործման և պահպանման ծախսերի կազմում էր մոտ 48 մլրդ. դրամ:

⁷ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ 1՝ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ) ԵՎ ՋՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ջրի կառավարման տնտեսական մեխանիզմներն ունեն երկու հիմնական գործառույթ. կարգավորող/կանխարգելիչ գործառույթ՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու և ջրային ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու համար, և հարկաբյուջետային գործառույթ՝ ջրի կառավարման ներդրումների և ֆինանսական ռեսուրսների առաջացման (դրամական հոսքերի ավելացման) համար ջրի պահպանման, կառավարման և հարակից գործունեության համար:

Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման համար տնտեսական մեխանիզմների կիրարկումը մեկնարկել է 1986 թվականից: Այն համապատասխանում է նախկին Խորհրդային Միության նորմատիվ փաստաթղթերին՝ «Շրջակա միջավայրի աղտոտումից ազգային տնտեսությանը հասցված վնասի գնահատման ժամանակավոր մեթոդները» վերնագրով:

1993 թվականին՝ արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում, սեպտեմբերի 8-ի կառավարության թիվ 448 որոշմամբ ներդրվեց բնապահպանական վճարների համապարփակ համակարգ, որը համահունչ էր Հայաստանում «վճարում են աղտոտողները» սկզբունքին:

1998թ.-ին սկսվեցին տնտեսական բոլոր մեխանիզմների բարեփոխումները և մասնավորապես մեկնարկեցին ջրի օգտագործման և աղտոտման վճարների համակարգի բարեփոխումները: Դա կարևոր էր իրավական տեսանկյունից, քանի որ նախկինում ջրի հետ կապված վճարները հիմնված էին միայն կառավարության որոշումների վրա, որոնք չունեին բավարար իրավական կշիռ: 1998 թվականի վերանայմամբ՝ առաջին անգամ օրենքով կարգավորվեցին բնօգտագործման, մասնավորապես ջրօգտագործման վճարները:

Գանձման դրույքաչափը չափազանց ցածր է ռեսուրսի օգտագործման համար, և դա արդեն իսկ խոչընդոտում է տնտեսական մեխանիզմների կիրառմանը:⁸ Ջրօգտագործման վճարների դրույքաչափերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Ջրօգտագործման վճարների դրույքաչափերը Հայաստանում ՀՀ դրամ/մ3

	Չկնարուծու թյուն	Արդյունաբերությ ուն	Իմելու և տան օգտագործմ ան	Ոռոգու մ	Այլ	Ջրամատակարար ման և կոյուղային ջրերի ընկերություններ և տեղական իշխանությունները
Մակերևութային ջրեր (բացառությամբ Սևանա լճի)	1.0	0.5	0.5	0.0	0.5	0.025
Սևանա լիճ	1.5	1.5	-	0.2	1.5	1.5
Ստորերկրյա քաղցրահամ	1.3	1.3	1.3	1.3	1.3	0.065

⁸ՀՀ հարկային օրենսգիրք:

ջրային ռեսուրսների, որոնք կարելի է օգտագործել խմելու համար						
Ստորերկրյա քաղցրահամ ջրային ռեսուրսների, որոնք չեն օգտագործվում խմելու նպատակով	1.3	1.3	-	0.	1.3	0.0

1.1.ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Հայաստանի ներկայիս տնտեսական մեխանիզմների համակարգը չի համապատասխանում ժամանակակից մեթոդների գործիքակազմին, քանի որ ներկայիս վճարման դրույքաչափերը սահմանված չեն տնտեսական հիմնավորված սկզբունքներին համապատասխան: Թվարկված դրույքաչափերից բացակայում են ծախսերի կամ եկամուտների բաշխման հաշվարկման եղանակները, ինչպես նաև վնասի համարժեք փոխհատուցումը:

Ներկայիս բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգում զգալի թերություններ ի սկզբանե ներկայացվել են՝ որպես հիմնական պետական կազմակերպությունների կողմից վճարվող տուրքերի տեսակներ: Վճարները ձևական են ու աննշան և հաշվարկվում են փոխհատուցման ցուցանիշների, չափանիշների և կոնցետուրայ կամ համեմատական հաշվարկների հիման վրա՝ համաձայն խորհրդային շրջանում արված ուսումնասիրությունների:

1990-ականների սկզբին ելնելով տնտեսական զարգացման համար ավելի լավ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունից, կառավարությունը սահմանեց ջրային ռեսուրսների օգտագործման ցածր դրույքաչափեր: Ինչպես նաև արտոնություններ հատկացրեց ջրամատակարարման, ջրահեռացման և կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպություններին ջրի աղտոտման վճարների մասով: Այդպիսով խեղաթուրվեց ռեսուրսի իրական տնտեսական արժեքը և ջրի աղտոտվածության արժեքը: Այդ իսկ պատճառով ջրի օգտագործման դրույքաչափերը և աղտոտման վճարները բավարար ազդեցություն չեն ունեցել, մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտների բնապահպանական վարքագծի վրա:

Հայաստանում գործող տնտեսական մեխանիզմների ներկայիս համակարգը հիմնված է Հարկային օրենսգրքի 204-րդ հոդվածի վրա, սակայն օգտագործման և աղտոտման համար սահմանված դրույքաչափերը արդյունավետ չեն և չեն նպաստում առավել արդյունավետ վարքագիծ ձևավորելուն: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ պարզ է դառնում, որ Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման վճարային համակարգը չի համապատասխանում միջազգային լավագույն փորձին և չի ապահովում ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու ջրի աղտոտվածության նվազեցումը:

Ջրի կառավարման համար տնտեսական մեխանիզմների կիրառումը շատ կարևոր է Հայաստանի համար: Այն հնարավորություն կտա հավաքագրել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ջրի կառավարման միջոցառումները ֆինանսավորման համար, ինչպես նաև կօգնի փոխել աղտոտողների և օգտագործողների վարքագիծը: Սակայան բավարար է նշել, որ Հայաստանում 2020 թվականին բոլոր ջրօգտագործողները միասին, բոլոր ջրօգտագործման տեսակների համար ընդհանուր առմամբ վճարել են 593 միլիոն դրամ բնօգտագործման վճար⁹:

Հատկանշական է, որ հարկային օրենսգրքով նաև նշվում են չափաքանակներից ավելի օգտագործման կամ աղտոտման համար օգտագործվող դրույքաչափերը, որը հակասում է ջրային, ռեսուրսներին հասցված վնասի հաշվարկման կառավարության որոշման հետ¹⁰ փաստորեն կրկնելով հարկային օրենսգրքով սահմանված առավել խիստ դրույքաչափերին, այնինչ այս կառավարության որոշումները պետք է լինեին այն մեթոդական հիմքը, որի հիման վրա պետք է հաշվարկվեր բնապահպանական հարկը և բնօգտագործման վճարները:

Օրինակ՝ ապօրինի ջրօգտագործման դեպքում մի կողմից հաշվարկվում է հնգապատիկի կամ տասնապատիկի չափով Արարատի և Արմավիրի մարզերում բնօգտագործման վճար, սակայն դրա հետ մեկտեղ ջրային ռեսուրսներին հասցված վնասի հաշվարկման կառավարության որոշմամբ նախատեսված է տուգանք յուրաքանչյուր մ3 ավել կամ առանց թույլտվության ջրօգտագործման համար, ինչպես նաև վարչական պատասխանատվություն՝ ըստ էության մեկ իրավախախտման համար կիրառելով երեք տարբեր պատասխանատվության միջոցներ:

Ընդհանրապես բնօգտագործման վճարների համակարգը հիմնականում ներդրվել է ավելի քան 24 տարի առաջ և այդ ընթացքում խորքային փոփոխությունների չի ենթարկվել և բնական ռեսուրսների օգտագործման համար վճարների համակարգը էական փոփոխությունների, դրույքաչափերի վերանայման կարիք ունի:

Արարատյան ջրավազանում բավարար չկանոնակարգված ջրօգտագործման արդյունքում ստեղծվել է բնապահպանական բարդ իրավիճակ, որը փոխելու կամ բարելավելու համար առաջարկվում է համապատասխան միջոցառումների կամ քայլերի իրականացում, այդ թվում՝ Արարատյան ջրավազանում ջրօգտագործման ծավալները կտրուկ նվազեցնելու նպատակով առաջարկվում է օգտագործել հսկման և վերահսկման գործիքներ՝ ուժեղացնելով դրանց կարգավորիչ դերը:

Ոռոգման համար ջրի օգտագործման գրոյական դրույքաչափերը հանգեցրել են ջրային ռեսուրսների անվերահսկելի գերօգտագործման:

Ջրամատակարարող ընկերությունների կողմից ջրային ռեսուրսների օգտագործման համար սահմանված դրույքաչափերը 20 անգամ ավելի ցածր են, քան այլ օգտատերների համար (0,5-ի փոխարեն՝ 0,025 դրամ՝ մակերևութային ջրերի 1իւմ-ի համար և 1 դրամի փոխարեն՝ 0,05 դրամ՝ ստորգետնյա քաղցրահամ ջրի 1իւմ-ի համար): Ջրամատակարարման գործընթացում և կոյուղաջրերի դեպքում ջրի կորուստը շարունակում է մնալ բարձր՝ 70-80%:

⁹[https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__8%20Environment__\(J\)%20Environmental%20financing/EE-j-2.px/table/tableViewLayout2/?rxid=2f06da9f-cd00-469d-8467-50e8dd7957e5](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__8%20Environment__(J)%20Environmental%20financing/EE-j-2.px/table/tableViewLayout2/?rxid=2f06da9f-cd00-469d-8467-50e8dd7957e5)

¹⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134047>

Վերջերս ձկնաբուծության լայնածավալ զարգացումը զգալի բացասական ազդեցություն ունեցավ Արարատյան դաշտի ստորերկրյա արտեզյան ջրերի ավազանի վրա՝ ազդելով ջրային ռեսուրսների քանակի ու որակի, ինչպես նաև տնտեսության հարակից ոլորտների վրա:

ՀՀ կառավարության կողմից հաստատված գործող բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի էական թերությունները պայմանավորված են նաև նրանով, որ դրույքաչափերը հիմնականում բավական ցածր են և անբավարար, ինչպես նաև մոնիտորինգի և վերահսկողության ոչ լիարժեքությունը հանգեցնում է արժեքավոր բնական ռեսուրսների ոչ ողջամիտ սպառմանը:

Սպառողները, հատկապես բիզնես սեկտորից, բիզնեսի համար նախընտրում են օգտագործել խմելու ջրի աղբյուրներ կամ ստորերկրյա ջրեր և չեն ցանկանում դիտարկել այլ աղբյուրների հնարավորությունը: Եթե անգամ քաղցրահամ ջուրն ունի սեզոնային տատանումներ, և հնարավոր է որոշ ամիսներին ընդհանրապես ջրամատակարարումը դադարի, նրանք նախընտրում են են բողոքել ջրի սակավությունից և/կամ բացակայությունից՝ հնարավոր այլընտրանքներ փնտրելու փոխարեն: Օգտատերերից ոմանք կոյուղու ջուրն օգտագործում են անմիջապես ոռոգման նպատակով՝ առանց ջուրը գտելու և մաքրելու:

Կեղտաջրերի մաքրման կայանները գրեթե անարդյունավետ են և չեն նպաստում երկրորդային ջրի մաքրման գործընթացին՝ հետագա օգտագործման նպատակով:

1.2.ՆԵՐԿԱՅԻՍ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ջրի կառավարման համար տնտեսական գործիքների օգտագործումը շատ կարևոր է Հայաստանի համար: Այն հնարավորություն կտա լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ հավաքելու ջրի կառավարման միջոցառումների ֆինանսավորման համար, ինչպես նաև օգնելու փոխել աղտոտողների և օգտագործողների վարքագիծը: Այստեղ դիտարկվում են կանաչ և կապույտ տնտեսությունների միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև նկարագրվում են իրավական և տնտեսական նորարարական մոտեցումների շրջանակներում փակ ցիկլերը: Չեկույցում ներկայացված են իրավական տերմինները և նկարագրությունները: Պետք է ընդգծել, որ ջրի օգտագործման «երկրորդային» և «կրկնակի» տերմինները ճշգրիտ չեն ջրի վերաօգտագործման գործընթացը նկարագրելու համար: Հետևաբար, պետք է վերանայել այս տերմինները և օգտագործել միջազգային իրավունքում տարածված և միջազգային հանրության կողմից ընդունված տարբերակները՝ օրինակ «ջրի վերաօգտագործում» տերմինը:

Մասնավորապես, ուսումնասիրվում են ջրի երկրորդական օգտագործկան ԵՄ իրավական կարգավորումներն ու չափանիշները՝ դիտարկելով դրանք այնպիսի առաջադեմ երկրների օրինակով, ինչպիսին Դանիան է: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ԵՄ-ում կան բազմաթիվ զարգացած երկրներ և ջրի վերօգտագործման լավագույն փորձառություններ կարելի է գտնել նաև ԱՄՆ-ում: Ինչպես նաև որոշ հետխորհրդային երկրներում կան ջրի վերօգտագործման որոշ մոտեցումների կիրարկման փորձեր (օր.՝ Վրաստան): Նման լավագույն փորձերից ներկայացված են մի քանիսը՝ սույն զեկույցը հնարավորինս հակիրճ կազմելու նպատակով:

Բացահայտվել են ազգային օրենքներում և կանոնակարգերում առկա բացերը և տրվել են համապատասխան առաջարկություններ: Հայաստանում այժմ գործող կանոնակարգերը վերլուծվել են ու համեմատվել ջրի որակի և ռեսուրսների կառավարման վերաբերյալ ՀԸԳՀ դրույթների միջազգային իրավական, քաղաքական ու ինստիտուցիոնալ շրջանակի ներքո, որը ներառել է, բայց չի սահմանափակվել Ջրի շրջանակային Դիրեկտիվի (Water Framework Directive, 2000/60/EC), ԵՄ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին Դիրեկտիվի (EU Urban Wastewater Treatment Directive, 91/271/EEC), և ջրի վերաօգտագործման նվազագույն պահանջների ԵՄ Դիրեկտիվի (2020/741 առ 25.05.2020) և այլ համապատասխան կանոնակարգերի ու փաստաթղթերի հետ:

Ընթացիկ ուսումնասիրությունը վերաբերում է համապատասխանաբար ՀՀ ջրային օրենսգրքին, ՀՀ հարկային օրենսգրքին, Ջրի ազգային ծրագրին և Կլիմայի փոփոխության ազդեցության և հարմարվողականության հաշվետվություններին: Թվարկված կարգավորող փաստաթղթերին զուգահեռ ուսումնասիրվել են նաև ենթաօրենսդրական ակտերը՝ որոշումների կայացման համակարգում առկա անհամապատասխանությունները և բացերը վերհանելու համար:

Բացի Արարատյան դաշտից, կուսումնասիրվի հանքարդյունաբերության ոլորտում երկրորդային ջրօգտագործման ներուժը:

Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 885-Ն որոշման՝ արդյունաբերության կարիքների համար ներդրված ջրամատակարարման համակարգերը կարող են շրջանառվել ինչպես արդյունաբերական կազմակերպության ամբողջական ջրամատակարարման, այնպես էլ վերջինիս առանձին արտադրամասերի կողմից: Շրջանառվող ջրամատակարարման համակարգերը տեղադրման ենթակա են բոլոր արդյունաբերական կազմակերպություններում, որտեղ.

- ջուրը ծառայում է որպես ջերմային կրիչ (սառեցման միջոց) հովացման և ջերմային խտացման ագրեգատների համար,
- ջուրն օգտագործվում է որպես մեխանիկական խառնուրդների տեղափոխման միջոց,
- որակյալ խմելու ջուրն օգտագործվում է արդյունաբերության կարիքների համար,
- ջրամատակարարման աղբյուրները սահմանափակ են:

ԳԼՈՒԽ 2՝ ՀՀ-ՈՒՄ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՈՎ

Այս գլխում ուսումնասիրվում է ՀՀ ջրային քաղաքականությունը, հարկման ձևերն ու երկրորդային ջրի կառավարումը՝ իրավական կարգավորումների դիտանկյան տակ: Ինչպես ներկայացվեց առաջին գլխում, Հայաստանում ջրօգտագործման գրեթե բոլոր տեսակների համար թե՛ ազգային քաղաքականության, թե՛ իրավական կարգավորումների մեջ բացակայում են ջրային ռեսուրսների օգտագործման համար նախատեսված վճարների համապատասխան կարգավորումները և կիրարկման մեխանիզմները:

Այս գլխում ներկայացված են ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի տեղական օրենքների, քաղաքականության և ենթաօրենսդրական ակտերի վերլուծությունները:

Ջրային ռեսուրսների կառավարման հիմնական իրավական և քաղաքական փաստաթղթերն են.

- ՀՀ ջրային օրենսգիրք
- ՀՀ Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին օրենք¹¹
- ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին օրենք
- ՀՀ հարկային օրենսգիրք
- Սևանա լճի մասին ՀՀ օրենք
- Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենք:

Այնուամենայնիվ, երկրորդական ջրօգտագործմանը վերաբերող դրույթներն ու կանոնակարգերը վերոհիշյալ օրենսդրական փաստաթղթերում հիմնականում մատնչված չեն¹²:

Ջրային ռեսուրսների կառավարման ազգային քաղաքականության և գործող օրենսդրության համաձայն՝ Հայաստանում ներկայումս առաջնահերթ ոլորտներն են

- Ջրային ռեսուրսների համալիր կառավարման (ՋՌԿ) սկզբունքների իրականացում՝ ԵՄ օրենսդրությանը համապատասխան:
- Ջրի և առողջության մասին UNECE-WHO/Europe Protocol-ի վավերացումն ու իրականացումը:
- Կեղտաջրերի հավաքման և մաքրման ռազմավարությունը: ¹³

Հայաստանը ջրային ռեսուրսների սակավությանը պատրաստվում է 21-րդ դարի սկզբից: 2006 թվականից սկսած ՀՀ կառավարությունը իրականացնում է Ջրի ազգային ծրագիրը, որի նպատակն է կարգավորել ջրային ռեսուրսների կառավարումը Հայաստանի կառավարության

¹¹<https://leap.unep.org/countries/am/national-legislation/law-no-ho-96-n-fundamental-provisions-national-water-policy>
¹² Նշված օրենքները հիմնականում ընդունվել են 2002-2005թթ, իսկ երկրորդային ջրօգտագործման տերմինները ընդունվել են 2015թ-ից
¹³<https://www.oecd.org/env/outreach/npd-armenia.htm>

կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներին համապատասխան: «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը միտված է երկրի համար լուծել հետևյալ խնդիրները.

1) ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների պահպանմանը և ավելացմանն ուղղված միջոցառումների սահմանումը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի որոշման չափանիշների և այդ համակարգերի ցանկի սահմանումը.

2) ջրօգտագործման վճարի առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.

3) ջրերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի գնահատումը.

4) ջրային ռեսուրսների ամբարման, բաշխման և օգտագործման ռազմավարության սահմանումը.

5) Ջրի ազգային ծրագրի կատարումն ապահովող իրավական ակտերի ընդունման ու կատարման, դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործողությունների համակարգմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

6) ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական թողքերի մեծությունների և ջրերի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների ճշգրտմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկի, ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիների մշակմանը, ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ու ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

7) Ջրի ազգային ծրագրում ընդգրկված միջոցառումների նկարագրի, ծավալների, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինների և ժամանակացույցի սահմանումը.

8) Ջրի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական պահանջների և ֆինանսավորման առաջարկվող աղբյուրների սահմանումը.

9) հասարակության իրազեկության ապահովումը: ¹⁴

Օրենքում 4-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ կետերը վերաբերում են ջրային ռեսուրսների օգտագործման վճարներին:

Այս Ծրագրի բացը երկրորդական ջրօգտագործման պահանջների բացակայությունն է: Կեղտաջրերի կառավարումը նշված է միայն 5-րդ գլխի 2-րդ (5) կետում, որն անդրադառնում է ջրավազանային կառավարման գործընթացում կեղտաջրերի վերաբերյալ սեփականատերերից տեղեկատվություն պահանջելու թեմային:¹⁵ Այնուամենայնիվ, ո՛չ իրականացման, ո՛չ էլ կիրարկման մեխանիզմները սահմանված չեն:

¹⁴<https://www.arlis.am/documentview.aspx?docID=113051>

¹⁵<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1784>

Ջրի ազգային ծրագիրը վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 2022 թվականի հուլիսի 7-ին, որտեղ առաջին անգամ ներդրվել է անապահով սպառողների ու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության ապահովման հասկացությունները տրվել մեխանիզմները, ինչպես նաև սուբսիդիաների տրամադրման կարգը կառավարությունը պետք է ընդունի երեք տարվա ընթացքում:

ՀՀ ջրային օրենսգիրքը նույնպես վերջին փոփոխությանն է ենթարկվել 2022 թվականի հուլիսի 7-ին¹⁶, որով առաջին անգամ սահմանվել են կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների խոցելիությունը և կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների հարմարվողականությունը:

Օրենսգրքի ջրահեռացմանը վերաբերվող փոփոխությունները ԱԺ կողմից ընդունվել էին 2018 թվականի մարտի 2-ին, սակայն ուժի մեջ կմտնեն 2030թ:

Օրենքի փոփոխություններով նախատեսված էր, որ երկու տարվա ընթացքում պետք է հաստատվեր ոռոգման ջրի որակի ստանդարտները և արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետման թույլատրելի սահմանային արտահոսքի և այլ լրացուցիչ պահանջները ինչպես նաև արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ ջրային ռեսուրս արտանետման դեպքում թույլատրելի սահմանային արտահոսքի ընդհանուր պահանջները, ինչպես նաև անհատական պահանջների տրամադրման կարգը և պայմանները, յմաներեք տարվա ընթացքում բնակավայրերի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերին ներկայացվող տեխնիկական պահանջները և դրանց իրականացման ժամանակացույցը:

Թեպետ, օրենսգիրքը տարբեր տարիների ենթարկվել է փոփոխությունների, և որոշ հոդվածներ անդրադառնում են մինչ այժմ փոփոխված կանոնակարգերին: ՀՀ ջրային օրենսգիրքն ընդգրկում է ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի գրեթե բոլոր ոլորտներն ու ենթաոլորտները: Այն ունի 13 գլուխ՝ 121 հոդվածներով:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով ձևորոշության և խեցգետնի ջրօգտագործման արդյունքում առաջացած ջրային ռեսուրսների այլ նպատակներով ջրահեռացման արդյունքում առաջացած ջրային ռեսուրսների վարձի կրկնօրինակ (երկրորդային) հաշվարկը խթանելու համար, սահմանվում են նորմեր. Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումը կարող է իրականացվել այլ անձանց կողմից գյուղատնտեսական կամ արդյունաբերական արտադրության նպատակներով: (ՀՕ-19-Ն հոդվածը լրացվել է 25.1-րդ հոդվածով 21.01.2015թ.)”

Ձկնաբուծական և խեցգետնաբուծական ջրօգտագործումից կատարվող ջրահեռացման արդյունքում առաջացած ջրային ռեսուրսները այլ նպատակներով կրկնակի (երկրորդային) օգտագործման տալը տնտեսապես խթանելու համար, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին

¹⁶ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=166206>

համապատասխան, սահմանվում են բնօգտագործման վճարների հաշվարկման ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) օգտագործումը խթանող նորմեր: Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումը կարող է այլ անձանց կողմից իրականացվել գյուղատնտեսական կամ արդյունաբերական արտադրության նպատակներով (25.1-ին հոդվածը լրաց. 21.12.15 ՀՕ-19-Ն):¹⁷

2021 թվականից ի վեր հոդվածն ունի հետևյալ շարադրանքը.

«1. Ջրօգտագործումից հետո հեռացվող ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումն ապահովելու համար համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու և կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում իրականացվելու դեպքում ջրային ռեսուրսից ջրատ իրականացնող անձի համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանվում են բնօգտագործման վճարների հաշվարկման արտոնություններ:

Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործողի համար կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման տրված ջրային ռեսուրսների նկատմամբ բնօգտագործման վճար չի հաշվարկվում:

2. Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումը կարող է իրականացվել «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությամբ՝ ըստ ջրօգտագործման նպատակին համապատասխանող ջրին ներկայացվող պահանջների: (25.1-ին հոդվածը լրաց. 21.12.15 ՀՕ-19-Ն, խմբ. 02.03.18 ՀՕ-126-Ն)¹⁸

Այս փոփոխության միջոցով երկրորդական ջրօգտագործման համար բնօգտագործման վճարը գրոյացվել է, մինևույն ժամանակ ջրային օրենսգրքում բացակայում է երկրորդական ջրօգտագործման սահմանումը:

Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի բացերն ու խոչընդոտները

Սույն հետազոտության ընթացքում հայտնաբերված ակնառու բացը, որ առկա է գրեթե բոլոր փաստաթղթերում, օրենքներում և քաղաքականությունների մեջ, բացառությամբ ՀՀ ջրային օրենսգրքի, երկրորդական ջրօգտագործման (վերօգտագործման) մասին ուղիղ կարգավորման բացակայությունն է: Երկրորդային ջրօգտագործումը փոքր-ինչ շոշափվում է արդյունաբերական նպատակներով ջրի կայուն օգտագործման գաղափարի շրջանակներում: Այնուամենայնիվ, այն չի կարող կիրառվել կամ հաջողությամբ կիրարկվել, քանի որ բացակայում են երկրորդային ջրօգտագործման գործընթացի իրականացման մանրամասները: Իրականացման և դրա բացակայության սցենարները մանրամասնորեն ներկայացված են ընթացիկ ուսումնասիրության 1-ին գլխում: Հետևաբար, ենթադրվում է, որ գործող ՀՀ ջրային օրենսգրքի 25.1-ին հոդվածում բացակայում են այլ համապատասխան օրենքների կիրառման և աջակցության մեխանիզմները (օր.՝ Հարկային օրենսգրքը կամ ՀՀ ջրի ազգային քաղաքականության օրենսդրությունը):

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

Կեղտաջրերի մաքրման վերաբերյալ կան միայն իրավական և ինստիտուցիոնալ հենքեր, և ինչպես իրականությունը ցույց է տալիս, Հայաստանում կառուցված կեղտաջրերի մաքրման 20 կայաններից միայն 4-ն են գործում. ընդ որում, այդ կայանները չունեն գոհչ սարքեր և ջուրը մաքրում են միայն կոշտ նյութերի հավաքմամբ: Եթե անգամ իրավական և ինստիտուցիոնալ գործիքները նախատեսում են երկրորդային ջրօգտագործման համապատասխան կարգավորումներ, ակնհայտ է, որ չկան կանոնակարգերի իրականացման տեխնոլոգիաներ և մեխանիզմներ: ՀՀ ջրային օրենսգրքի ուսումնասիրությունը և դրա գոյության ընթացքում մի քանի անգամ 25.1-րդ հոդվածի համապատասխան փոփոխությունները հավաստում են հոդվածի անորոշությունը և դրա իրականացման թերի լինելը՝ առանց համապատասխան տնտեսական և տեխնիկական սահմանված մեխանիզմների:

Թեև Ջրային օրենսգրքի 101 հոդվածը նշում է ոռոգման ջրի որակի ապահովման մասին սակայն չկա ենթաօրենսդրական ակտը, որով պետք է սահմանվի ոռոգման նպատակով օգտագործվող ջրի որակի առանձնահատկություններ: Այն վերաբերում է կեղտաջրերի կառավարմանը, մաքրմանը և տեսակներին, դեռևս բացակայում է կեղտաջրերի արտահոսքի որակի և հետմաքրման որակի վերաբերյալ պահանջների պատշաճ նկարագրությունը: Կեղտաջրերի մաքրման և երկրորդային ջրօգտագործման պատշաճ իրականացման համար օրենսդրությամբ պետք է ընդլայնվի և մանրամասն նկարագրվի նման տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 3՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՉՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս գլխում նկարագրվում է ԵՄ-ում ջրային ռեսուրսների կառավարման համակարգի իրավական, քաղաքական ու ինստիտուցիոնալ շրջանակը և միջազգային իրավունքի համապատասխան դրույթները: Գործող կարգադրություններն ու կանոնակարգերը գնահատվում են երկրորդական ջրօգտագործման արդյունավետ կիրարկման դիտանկյունից: Մասնավորապես, այստեղ դիտարկվում են կեղտաջրերի մաքրումը, վերաօգտագործումը, վերամշակումը և մաքրված ջրի սպառումը ԵՄ անդամ երկրներում, և որպես լավագույն օրինակ՝ նկարագրվում է Դանիայում կիրարկվող փորձառությունը: Այս ընտրությունը պայմանավորված է բնապահպանական որոշումների ուղղվածությամբ Դանիայի բացառիկ գործունեությամբ՝ ի համեմատություն ԵՄ անդամ այլ երկրների:

Վերօգտագործման համար ջրի հնարավոր աղբյուրները ներառում են քաղաքային կեղտաջրերը, արդյունաբերական գործընթացները և հովացման համար օգտագործվող ջուրը, հեղեղաջրերը, գյուղատնտեսական արտահոսքերը և բնական ռեսուրսների արդյունահանման գործողություններից ստացված ջուրը: Ջրի այս աղբյուրները պատշաճ կերպով մշակվում են, որպեսզի հաջորդ օգտագործման համար համապատասխանեն «նպատակին համապատասխան բնութագրերին» (Fit-for-purpose specifications): «Նպատակին համապատասխան բնութագրերը» մաքրման պահանջներն են՝ որոշակի աղբյուրից ջուրն անհրաժեշտ որակին հասցնելու, հանրային առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ օգտագործողների հատուկ կարիքների ապահովման համար: Օրինակ՝ մշակաբույսերի ոռոգման համար վերականգնված ջուրը պետք է ունենա բավարար որակ՝ բույսերին և հողերին վնաս չպատճառելու, սննդամթերքի անվտանգությունն ապահովելու և ֆերմերային տնտեսություններում աշխատողների առողջությանը չվնասելու համար: Այն դեպքերում, երբ ջուրն օգտագործվելու է մարդկանց ավելի լայն ներգրավվածության նպատակով, ավելի շատ գտման ու մաքրման մեխանիզմներ են անհրաժեշտ:

Ջրային ռեսուրսների սակավությունը, կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքով դրանց սպառնացող վտանգը և անտեղի սպառմամբ պայմանավորված խնդիրները դրդեցին միջազգային հանրությանը ձեռնարկել կանխարգելիչ սկզբունքային քայլեր՝ ընդունելով շրջակա միջավայրի պահպանության մասին օրենքներ և վավերացնելով ջրային ռեսուրսների համար պայմանագրեր: Մինչև 20-րդ դարի վերջը ՄԱԿ-ն իր անդամ երկրների համար մշակել է երկու պարտադիր կոնվենցիա:

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված գլոբալ ռիսկերի մասին տարեկան հաշվետվության մեջ մի քանի տարի է, ինչ բիզնես ոլորտի առաջատարները ջրի հետ կապված ռիսկերը դասում են հրատապ հինգ ռիսկերի շարքում: Համաշխարհային քաղցրահամ ջրերի հոսքի 80 տոկոսը գտնվում է անդրսահմանային ավազաններում, և երկրագնդի բնակչության 40 տոկոսն ապրում է այդ ավազաններում: Այս ջրերի կոռուպտիվ, արդար և կայուն կառավարումը չափազանց կարևոր է կայուն զարգացման, հակամարտությունների կանխարգելման, խաղաղության և կլիմայի փոփոխությանը դիմակայելու համար:

Աշխարհի զարգացող և զարգացած հատվածները ձգտում են համապատասխանելու ջրային քաղաքականությանը, կանոնակարգերին և գործիքների արդյունավետ կիրառմանը: Ուստի

տնտեսության որոշ ոլորտներում ջրի խնայողությունը, վերամշակումը և վերօգտագործումը դառնում է օրվա հրամայական: ԵՄ երկրները հետևում են միջազգային ջրային օրենքներին և կանոնակարգերին, որոնք ստեղծվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ԵՄ խորհրդարանի և ԵՄ խորհրդի կողմից: Ջրային ռեսուրսների կառավարման հիմնական միջազգային օրենքը Ջրի կոնվենցիան է: Հայաստանը ստորագրել է սույն Կոնվենցիայի ջրի և առողջության մասին արձանագրությունը: «Հայաստանի Հանրապետությունը 1999 թվականի հունիսի 17-ին Լոնդոնում ստորագրել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 1992 թվականի Անդրասիանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիան (Ջրի կոնվենցիա): Այդ ժամանակից սկսած՝ վավերացման գործընթաց է սկսվել»:¹⁹

Միջազգային իրավունքը վերաբերում է Հայաստանին միայն այն դեպքում, եթե նա ստորագրել է համապատասխան կոնվենցիան: Այնուամենայնիվ, միջազգային հաջողված փորձը լավագույն միջոցն է հայաստանյան իրականության համար համապատասխանող լավագույն տարբերակները տեղայնացնելու ու հարմարեցնելու, ուսումնասիրելու և հայտնաբերելու համար: Անհրաժեշտ է գտնել ողջամիտ գնային քաղաքականություն և կանոնակարգեր, որոնք կարող են էական դեր խաղալ երկրում գործող ջրօգտագործման վճարների մշակման և/կամ փոփոխման հարցում:

Սույն զեկույցի առանցքային խնդրներից էտարբեր երկրներում երկրորդային ջրօգտագործման օրենքները, քաղաքականությունները, կանոնակարգերը և դրանց իրականացումը ուսումնասիրելը և վերլուծելը: Նախքան տարբեր պետություններում առկա իրավիճակները՝ որպես երկրորդային ջրօգտագործման լավագույն օրինակներ քննարկելը, տեղին է անդրադառնալ երկրորդային ջրօգտագործման վերաբերյալ միջազգային ջրային օրենքների պահանջներին: Ջրի միջազգային օրենքների և կանոնակարգերի ցանկը ներկայացված է ստորև բերված աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5՝ Ջրի միջազգային օրենքների և կանոնակարգերի ցանկ

Միջազգային օրենքներ	
Ջրի միջազգային օրենք/ International Water Law	Անդամ երկրներ
ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ջրի կոնվենցիա/ UNECE Water Convention	ՄԱԿ անդամ երկրներ
ՄԿ-ի ջրային հոսքերի կոնվենցիա / UN Watercourses Convention	ՄԱԿ անդամ երկրներ
Ջրի շրջանակային կարգադրություն /Water Framework Directive (2000/60/EC)	ԵՄ անդամ երկրներ

¹⁹https://unece.org/fileadmin/DAM/env/water/npd/Armenia/Action_Plan_final_eng.pdf

Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին կարգադրություն/ Urban Waste Water Treatment Directive (91/271/EEC)	ԵՄ անդամ երկրներ
Ջրի վերաօգտագործման նվազագույն պահանջների ԵՄ կանոնակարգ/ EU Regulation 2020/741 of the European Parliament and of the Council (2020/741 առ 25.05.2020)	ԵՄ անդամ երկրներ
Շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիր 2020 թ/ Circular Economy Action Plan 2020	ԵՄ անդամ երկրներ
ՄԱԿ-ի ջրային կոնվենցիայի ջրի և առողջության մասին արձանագրություն /Protocol on Water and Health of UN-Water Convention	ՄԱԿ անդամ երկրներ, ներառյալ ՀՀ-ն
Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)	Հայաստան-ԵՄ միջև (CEPA/ՀԸԳՀ)

Երկրորդային ջրօգտագործման քաղաքականության կիրառման առումով ԵՄ անդամ երկրները կենտրոնացած են գյուղատնտեսության ոլորտի վրա և ձգտում են իրականացնել շրջանաձև տնտեսության միջոցառումներ՝ այս ոլորտում վերաօգտագործելով մաքրված կեղտաջրերը: Շրջանաձև տնտեսության ձեռքբերումը ԵՄ համայնքը կապում է ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման և/կամ սպառման մեխանիզմների ինտեգրման միջոցով:

ԵՄ-ն ունի ջրային քաղաքականության փաթեթ, որը պարտադիր է միայն իր անդամ երկրների համար: Ջրի պահպանության և ջրային քաղաքականության մասին ԵՄ բնապահպանական օրենքը ներառում է հետևյալ գործիքակազմը.²⁰

- ԵՄ ջրային դիրեկտիվ
- Ստորերկրյա ջրերի մասին դիրեկտիվ
- Հեղեղումների ռիսկի կառավարման դիրեկտիվ
- Շրջակա միջավայրի որակի ստանդարտների մասին դիրեկտիվ
- Ծովային միջավայրի ռազմավարության մասին դիրեկտիվ
- Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին դիրեկտիվ
- Լողանքի ջրերի մասին դիրեկտիվ
- Խմելու ջրի մասին դիրեկտիվ
- Նիտրատների մասին դիրեկտիվ²¹

Ինչպես նաև ներառելով հետևյալ առաջնահերթությունները.

²⁰<https://www.bmu.de/en/topics/water-resources-waste/water-management/policy-goals-and-instruments/eu-water-policy>

²¹ ՀՀ ջրային օրենսգրքի 2022 թվականի Հունիսի 7-ի փոփոխությամբ առաջին անգամ նիտրատների վերաբերյալ կարգավորումներ են տրվել

- Կլիմայի փոփոխությանը հարմարվելը
- ԵՄ-ում երաշտները և ջրի սակավությունը
- Ջրի գնագոյացումը և երկարաժամկետ կառավարումը:

Սույն գեկույցի շրջանակներում ուսումնասիրվել է երկրորդային օգտագործման պահանջների և գնային քաղաքականության վերաբերյալ ԵՄ-ի և ՄԱԿ-ի հիմնական փաստաթղթերը:

ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվ (2000/60/EC)

ԵՄ քաղաքականության փաստաթղթերը մեծապես ազդում են ոչ միայն ԵՄ անդամ երկրների, այլև ոչ անդամ պետությունների գործունեության վրա, ինչպես նաև ՄԱԿ-ի ԿԶՆ-ների իրականացմանը, քանի որ ԵՄ անդամ չհանդիսացող երկրների մեծամասնությունը լավագույն օրինակներ է փնտրում ԵՄ քաղաքականության և ԵՄ անդամ երկրների կողմից իրականացվող քայլերի շրջանակներում: Նման քաղաքականություններից է Ջրի շրջանակային դիրեկտիվը 2000/60/EC: Այս փաստաթուղթը ԵՄ-ի կենտրոնական կանոնակարգերից մեկն է, քանի որ այն ուղղված է մի շարք հավակնոտ նպատակների իրականացմանը՝ ջրի կառավարման և պլանավորման գործընթացներում հանրային մասնակցության հաստատմանը, «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացմանը: Այն հիմք է ծառայում ԵՄ անդամ երկրների համար, որպեսի ջրային ռեսուրսները օգտագործվեն արդարացի կերպով: Այս քաղաքականությունն իրականացվում է ԵՄ ջրային նախաձեռնության և ԵՄ-ում ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման օգնությամբ:

ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվը «... սահմանում է կանոններ՝ դադարեցնելու Եվրամիության (ԵՄ) ջրային մարմինների կարգավիճակի վատթարացումը և մինչև 2015 թվականը Եվրոպայի գետերի, լճերի և ստորերկրյա ջրերի «լավ կարգավիճակի» հաստատումը: Մասնավորապես, սա ներառում է.

- բոլոր տեսակի ջրերի (մակերևութային, ստորգետնյա, ցամաքային և անցումային) պահպանությունը;
- այս ջրային մարմիններում և շրջակայքում էկոմահամակարգի վերականգնումը;
- ջրային մարմինների աղտոտվածության նվազեցումը;
- անհատների և ձեռնարկությունների կողմից ջրի կայուն օգտագործման երաշխավորումը:²²

ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի համաձայն՝ ԵՄ անդամ երկրները պարտավորվում են.

- «իրենց տարածքում տեղանշել առանձին գետավազանները, այսինքն՝ շրջակա հողատարածքները, որոնք առհասում են այդ գետային համակարգերի մեջ;
- նշանակել պատասխանատու մարմիններ, ովքեր կկառավարեն այս ավազանները ԵՄ կանոններին համապատասխան;
- վերլուծել յուրաքանչյուր գետավազանի առանձնահատկությունները և յուրաքանչյուր տեսակի ջրային մարմնի համար սահմանել ծանոթագրություն՝ դրանց կարգավիճակը որակելու համար.
- վերլուծել մարդկային գործունեության ազդեցությունը և ջրօգտագործման տնտեսական

²²<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM:l28002b>

զնահատումը;

- վերահսկել ջրի կարգավիճակը յուրաքանչյուր ավազանում;
- գրանցել պահպանվող տարածքները, ինչպիսիք են խմելու ջրի համար օգտագործվող տարածքները, որոնք հատուկ հսկողություն պահանջում;
- մշակել և իրականացնել «գետավազանային կառավարման պլաններ»՝ մակերևութային ջրերի վիճակի վատթարացումը կանխելու, ստորերկրյա ջրերը պահպանելու ու բարելավելու համար, ինչպես նաև պահպանվող տարածքները պաշտպանելու համար;
- ապահովել ջրային ծառայությունների արժեքը, որպեսզի ռեսուրսներն արդյունավետ օգտագործվեն, իսկ աղտոտողները վճարեն;
- տրամադրել հանրային տեղեկատվություն և խորհրդատվություն իրենց գետավազանային կառավարման պլանների վերաբերյալ:²³

Սույն զեկույցը դիտարկում է միջազգային քաղաքականության կանոններն ու կանոնակարգերը և փնտրում է օրինակելի դրույթներ, որոնք կարող են տեղայնացվել և ինտեգրվել Հայաստանի քաղաքականությանն ու իրավական կարգավորումներին:

Ջրի շրջանակային դիրեկտիվի կառավարման մեխանիզմը հիմնված է ջրի ինտեգրված կառավարման վրա, որը հնարավորություն կտա արդյունավետ կերպով պահպանել և վերականգնել Եվրոպայի ջրերը:

Թեև կառավարման ավանդական պրակտիկան, որի հիմքում հրամայել և հսկելու պարադիգմն է, արդյունավետ է եղել և թույլ է տվել զարգացած արդյունաբերական հասարակություններին կանխել առողջությանը սպառնացող ամենալուրջ բնապահպանական ազդեցությունները, սակայն դրանք պակաս արդյունավետ են ներկայիս բարդ բնապահպանական խնդիրների լուծման համար:

Հրամայել և հսկելու ավանդական մոտեցումները հաշվի չեն առնում ընդհանուր էկոհամակարգի փոխկախվածությունն ու ամբողջականությունը, և խնդիրները լուծում են տեղային, մեկուսացած կերպով: Ուստի ՋՇԴ-ի կառավարման մեխանիզմը նախագծված է այնպես, որ անդամ պետությունները հնարավորություն ունենան անդրադառնալու ջրային էկոհամակարգերին՝ որպես ամբողջություն, ստեղծել կառավարման պլաններ՝ հիմնված գետավազանների վրա, համագործակցել սահմաններից դուրս և համախմբել բոլոր համապատասխան գիտելիքներն ու վերլուծությունները:

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ

Քաղաքային կեղտաջրերի մաքրման քաղաքականություն և կանոնակարգեր սահմանելու մասին ԵՄ Խորհրդի դիրեկտիվը ընդունվել է 1991թ., սակայն դրանից հետո այն մի քանի անգամ փոփոխվել է, և վերջնական փոփոխությունները կատարվել են 2014 թվականին:

«Հանձնաժողովի 2014/413/ԵՄ որոշումը ընդունվել է 2014 թվականի հունիսի 26-ին և փոխարինել Հանձնաժողովի 93/481/ԵՏՀ որոշմանը, որն ընդունվել էր 1993 թվականի հուլիսի 28-ին: Այն սահմանում է անդամ պետությունների կողմից Հանձնաժողովին տրամադրվելիք

²³ Նույն տեղում:

տեղեկատվությունը՝ Դիրեկտիվի իրականացման իրավիճակի մասին հաշվետվություններ կայացնելու ժամանակ՝ համաձայն 17-րդ հոդվածի: Միաժամանակ, այն սահմանում է ձևաչափը, որով պետք է տրամադրվի այդ տեղեկատվությունը: Մույն որոշումն ընդունվել է Դիրեկտիվի 18-րդ հոդվածով»:²⁴

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվը վերահսկում է աղտոտված ջրի արտահոսքը այլ ռեսուրսներ և պահանջում է քաղաքային կեղտաջրերի առաջնային և երկրորդային մաքրում մինչև դրանց վերջնական արտահոսքը:

Անհրաժեշտ է ընդգծել այն կետերը, որտեղ քաղաքականությունը և իրավական դրույթները կապում են բոլոր համապատասխան Դիրեկտիվները և կոչ են անում դրանք իրականացնել համատեղ կերպով: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող քաղաքականությունն ու օրենսդրությունը բավարար չէին ջրային ռեսուրսների նվազման դեմ պայքարելու համար: Այս իսկ պատճառով ԵՄ անդամ երկրների մեծամասնության համար ջրային ռեսուրսների վերօգտագործումը դառնում է օրվա հրամայական: Միայն երկու Դիրեկտիվ է վերաբերում ջրի վերօգտագործմանը, սակայն դրանք չեն հասակեցնում նման պահանջի միջոցներն ու մեխանիզմները: Ուստի բարձրացվեց ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման նոր կանոնակարգերի ընդունման կարևորությունը:

Այս իսկ պատճառով, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2020 թվականի մայիսի 25-ին ընդունվեց 2020/741 կանոնակարգը ջրի վերօգտագործման նվազագույն պահանջների մասին, որով սահմանվեց ջրի վերօգտագործման նվազագույն պահանջները:

Համաձայն Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության (EEA), թեև 2002-2014 թվականներին ջրային սթրեսի ազդեցության տակ գտնվող ԵՄ տարածքը կրճատվել է, շարունակական ճնշումների պատճառով (օր.՝ կլիմայի փոփոխություն, բնակչության աճ և ուրբանիզացիա) ջրային սթրեսի թեժ կետերը, հավանաբար, կմնան անփոփոխ: Ջրի սակավության և երաշտի վերաբերյալ հանձնաժողովի 2007 թվականի հաղորդագրության մեջ նշվում էր, որ ջրային ռեսուրսները պետք է ավելի արդյունավետ կառավարվեն: Ըստ առաջարկի ազդեցության գնահատման, մաքրումից հետո ջրի վերօգտագործումը կարող է ծառայել որպես արդյունավետ և կայուն այլընտրանքային ջրամատակարարում և, հետևաբար, կարող է օգտակար գործիք լինել ջրային ռեսուրսների կառավարման համար: Այսօր ԵՄ-ում ջրի վերօգտագործումը շատ ավելի ցածր է իր ողջ ներուժից, Ջրի շրջանակային դիրեկտիվը 2000/60/EC (WFD) և Քաղաքային կեղտաջրերի մաքրման հրահանգը 91/271/EEC (UWWTD) արդեն իսկ բացահայտում և խրախուսում են ջրի կրկնակի օգտագործումը իրենց դրույթներում, սակայն, առանց իրականացման համար պայմաններ նշելու:

Մինչև ԵՄ-ում ջրի վերօգտագործման մեխանիզմների վերաբերյալ նոր կանոնակարգ առաջարկելը, Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը ԵՄ երկրներում իրականացրել է ջրի օգտագործման ազդեցության գնահատում և պարզել, որ ջրի վերօգտագործման միջոցառումներն առաջնահերթ են շրջանակաձև տնտեսության համար:

²⁴https://ec.europa.eu/environment/water/water-urbanwaste/legislation/directive_en.htm

«Անդամ պետությունները, որտեղ կիրառվում է ջրի վերաօգտագործում, ներառում են Բելգիան, Կիպրոսը, Դանիան, Ֆրանսիան, Հունաստանը, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Նիդեռլանդները, Պորտուգալիան, Իսպանիան, Շվեդիան և Մեծ Բրիտանիան»:

2015 թվականին ԵՄ-ում վերաօգտագործված մաքրված կեղտաջրերի ընդհանուր ծավալը տարեկան 1.1 մլրդ մ3 էր կազմում, մինչդեռ դրա ներուժը շատ ավելի մեծ է, և մինչև 2025 թվականը այն կհասնի տարեկան 6 մլրդ մ3-ի: Ազդեցության գնահատման շրջանակը ներառում է գյուղատնտեսական ոռոգման և ջրատար հորիզոնների վերալիցքավորման համար նախատեսված կեղտաջրերը, քանի որ դրանք ճանաչվել են որպես վերականգնված ջրի պահանջարկի հիմնական պոտենցիալ աղբյուրները, որոնք ունեն ամենամեծ պոտենցիալ կլանումը, սակավության նվազեցումը և ԵՄ համապատասխանությունը:

Եվրոպայում մաքրված կեղտաջրերի ընդհանուր ծավալի վերօգտագործումը կարող է ապահովել գյուղատնտեսական ոռոգման պահանջարկի գրեթե 44%-ը և խուսափել բնական աղբյուրներից ջրառի 13%-ից:²⁵

ԵՄ-ում կեղտաջրերի վերօգտագործման գործընթացի նպատակներն են.

- «ապահովել, որ ԵՄ-ում ջրի վերօգտագործման պրակտիկան լինի անվտանգ, ինչպես առողջության, այնպես էլ շրջակա միջավայրի համար. խթանել ջրի վերօգտագործումը՝ որպես ոռոգման համար ջրի ապահով աղբյուր, միաժամանակ լինելով շահավետ;
- միջոցներ ձեռնարկել շուկայի օպերատորների համար, ովքեր ցանկանում են ներդրումներ կատարել ԵՄ-ում մաքրված կեղտաջրերի վերօգտագործման մեջ՝ կարգավորող պայմանների համաձայն՝ հստակ, համահունչ և կանխատեսելի լինելով;
- ապահովել ԵՄ ընկերությունների կողմից ջրի վերօգտագործման ոլորտում ներքին և արտաքին շուկաների համար բիզնեսի և նորարարության խթանումը;
- սպառողներին տրամադրել հստակություն և վստահություն ԵՄ-ի շրջանակներում վերամշակված ջրով ոռոգվող գյուղատնտեսական արտադրանքի անվտանգության վերաբերյալ;
- ԵՄ-ի ներսում կանխել առևտրային խոչընդոտները գյուղատնտեսական առաջնային ապրանքների համար, որոնք ոռոգվում են վերամշակված ջրով՝ դրանով իսկ հեշտացնելով գյուղատնտեսական ապրանքների ազատ հոսքը»:²⁶

Յուրաքանչյուր անդամ երկիր ունի կեղտաջրերի սպառման վերօգտագործման և գնագոյացման իր կանոնակարգերը: Մինևույն ժամանակ, ԵՄ-ում ընդունվեց ջրի վերօգտագործման նվազագույն պահանջների մասին մանրամասն և համապարփակ փաստաթուղթ, որը համարվում է ամբողջական փաստաթուղթ առաջին հերթին գյուղատնտեսության և երկրորդ՝ ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում աղտոտման կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար: Այն ապահովում է այլընտրանքներ ռիսկերի, ֆինանսական ծախսերի և մաքուր ջրի սպառման նվազեցման համար ոչ միայն գյուղատնտեսության ոռոգման ոլորտում, այլ նաև արդյունաբերության որոշ ոլորտներում՝ հարմարավետության և բնապահպանական նպատակներով: Կանոնակարգն

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

ուժի մեջ է մտնում 2023 թվականի ամռանը:²⁷

Ավելին, Եվրոպական հանձնաժողովը որդեգրել է տնտեսական աճի նոր ուղղություն, որով նախատեսվում է որ «նոր կանոնները պետք է գործարկվեն 2020 թվականին ընդունված Շրջանային տնտեսության գործողությունների պլանի համատեքստում,²⁸ որը նաև ներառում է այս նոր կանոնակարգի իրականացումը Եվրոպայի շրջանաձև տնտեսության առաջնահերթությունների շարքում: Նախատեսվում է, որ Հանձնաժողովը կնպաստի ջրի վերաօգտագործմանը և արդյունավետությանը այլ ոլորտներում՝ արդյունաբերական գործընթացները ներառյալ:²⁹

ՄԱԿ-ի ջրային կոնվենցիայի ջրի և առողջության մասին արձանագրություն

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովը և ԱՀԿ-Եվրոպան ստեղծել են «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» կից Ջրի և առողջության մասին արձանագրությունը՝ որպես երկրագնդի բնակչության առողջության և բարեկեցության պաշտպանության եզակի իրավական պարտավորեցնող գործիք՝ ապահովելով պատշաճ կերպով կառավարվող ջրային ռեսուրսներ:

«Արձանագրության հիմնական նպատակն է պաշտպանել մարդու առողջությունն ու բարեկեցությունը ջրի ավելի լավ կառավարման միջոցով (ներառյալ ջրային էկոհամակարգերի պաշտպանությունը), ինչպես նաև ջրով փոխանցվող հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և նվազեցման միջոցով: Արձանագրությունն իր տեսակի մեջ առաջին միջազգային համաձայնագիրն է, որն ընդունվել է բոլորին ապահով խմելու ջրի և համապատասխան սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելու նպատակով և որպես խմելու ջրի աղբյուր օգտագործվող ջուրը արդյունավետ կերպով պաշտպանելու համար»:³⁰ Արձանագրությունը հիմք է տալիս գործնականում կիրառելու ջրի և սանիտարական պայմաններ ապահովելու մարդու իրավունքները և 6-րդ ԿԶՆ իրականացման համար:

ՀՀ-ն Արձանագրությունը ստորագրել է 1999թ., սակայն այն գտնվում է վավերացման փուլում: Արձանագրության շրջանակը կիրառվում է հետևյալի վրա. «Մույն Արձանագրության դրույթները կիրառվում են հետևյալ ջրային ոլորտների նկատմամբ. (ա) մակերևութային քաղցրահամ ջրեր; բ) ստորերկրյա ջրեր; գ) գետաբերաններ; դ) ավիամերձ ջրեր, որոնք օգտագործվում են հանգստի կազմակերպման համար կամ ջրային կուլտուրաների կողմից

²⁷<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32020R074>

²⁸https://ec.europa.eu/environment/pdf/circular-economy/new_circular_economy_action_plan.pdf

²⁹<https://ec.europa.eu/environment/water/reuse.htm>

³⁰<https://unece.org/environment-policy/water/protocol-on-water-and-health/about-the-protocol/introduction>

ձկներ կամ խեցեմորթների արտադրելու, կամ էլ բերքահավաքի համար; ե) փակ ջրեր, որոնք սովորաբար մատչելի են լողանքի համար. գ) ջրառի, տրանսպորտի, մաքրման կամ մատակարարման ընթացքում օգտագործվող ջուր; է) Կեղտաջրեր՝ հավաքման, տեղափոխման, մաքրման և արտահոսքի կամ վերաօգտագործման ընթացքում»:³¹

Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)

2021 թվականի մարտի 1-ին ուժի մեջ է մտել Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ/CEPA): Այն այժմ վավերացվել է Հայաստանի Հանրապետության, ԵՄ անդամ բոլոր երկրների և Եվրախորհրդարանի կողմից:

ՀԸԳՀ-ն նպատակաուղղված է ԵՄ-ի և Հայաստանի միջև արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև վերաբերում է բնապահպանական և բնական ռեսուրսներին: Մասնավորապես, Համաձայնագրի 46-րդ հոդվածը նախատեսում է համագործակցության հետևյալ կանոնակարգերը.

(a) բնապահպանական կառավարում և հորիզոնական հարցեր՝ ներառյալ ռազմավարական պլանավորումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը, կրթությունն ու վերապատրաստումը, մոնիթորինգն ու շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվական համակարգերը, տեսչական ստուգումներն ու գործողությունների իրականացումը, բնապահպանական պատասխանատվությունը, բնապահպանական հանցագործությունների դեմ պայքարը, անդրսահմանային համագործակցությունը, հանրության համար շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հասանելիությունը, որոշումների կայացման գործընթացները և վարչական ու դատական վերանայման արդյունավետ ընթացակարգերը. (b) օդի որակ. (c) ջրի որակի և պաշարների կառավարում՝ ներառյալ հեղեղումների ռիսկի կառավարումը, ջրի սակավությունն ու երաշտները. (d) թափոնների կառավարում. (e) բնության պաշտպանություն՝ ներառյալ անտառաբուծությունը և կենսաբանական բազմազանության պահպանումը. (f) արդյունաբերական աղտոտում և արդյունաբերական վտանգներ. (g) քիմիական նյութերի կառավարում: 2. Համագործակցությունը պետք է նաև նպատակաուղղված լինի շրջակա միջավայրը, բնապահպանական քաղաքականությունից բացի, այլ ոլորտային քաղաքականությունների մեջ ինտեգրելու գործընթացին:³²

Ջրի կառավարման գնագոյացման քաղաքականությունը ԵՄ օրենքում և միջազգային օրենքներում³³

ԵՄ-ի և ՄԱԿ-ի ջրային քաղաքականությունն ու օրենսդրությունը համարվում են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված քայլերի մի մասը: Հետևաբար, վավերացված

³¹<https://unece.org/DAM/env/documents/2000/wat/mp.wat.2000.1.e.pdf>

³² https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ENG_1.pdf

³³<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52000DC0477&from=EN>

իրավական փաստաթղթերի իրականացմանը և կիրարկմանը պետք է հետևեն ֆինանսական գործիքները և համապատասխան կանոնակարգերը:

Սույն ուսումնասիրության արդյունքում վերհանվեց, որ Եվրոպական հանձնաժողովը վարում է ճկուն գնային քաղաքականություն: Հաշվի առնելով Շրջանաձև տնտեսության գործողությունների պլանի նորարարական ընթացքը՝ ջրի և կեղտաջրերի վճարման քաղաքականության պահանջներն այժմ մանրագնին քննարկման առարկա են: ՁՇԴ-ն անդամ երկրներին տրամադրել է ջրի օգտագործման համար վճարներ գանձելու և համապատասխան գներ սահմանելու հնարավորություն:³⁴

«Հոդված 9. Ջրային ծառայությունների համար ծախսերի փոխհատուցում.

1. Անդամ պետությունները հաշվի են առնում ջրային ծառայությունների ծախսերի վերականգնման սկզբունքը, ներառյալ բնապահպանական և ռեսուրսների ծախսերը՝ հաշվի առնելով 3-րդ Հավելվածի համաձայն իրականացված տնտեսական վերլուծությունը և, մասնավորապես, հաշվի առնելով «ադտոտողը վճարում է» սկզբունքը: Անդամ պետությունները պետք է երաշխավորեն,

- որ ջրի գնագոյացման քաղաքականությունը համապատասխան խթաններ է տալիս օգտվողներին ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու համար և դրանով իսկ նպաստում սույն Դիրեկտիվի բնապահպանական նպատակներին,

- ջրային ծառայությունների ծախսերի փոխհատուցման համար ջրի տարբեր օգտագործման՝ առնվազն արդյունաբերության, տնային տնտեսությունների և գյուղատնտեսության ոլորտների բաշխված համապատասխան ներդրումը՝ հիմնված 3-րդ հավելվածի համաձայն իրականացված տնտեսական վերլուծության վրա և հաշվի առնելով «ադտոտողը վճարում է» սկզբունքը:

Անդամ պետությունները կարող են հաշվի առնել վերականգնման սոցիալական, բնապահպանական և տնտեսական հետևանքները, ինչպես նաև տուժած տարածաշրջանի կամ շրջանների աշխարհագրական և կլիմայական պայմանները»:³⁵

Հաշվի առնելով ՁՇԴ-ի երեք հիմնապայմանները, պարզ է, որ ջրի օգտագործման գինը պետք է ներառի այդ գործունեության տնտեսական, բնապահպանական և սոցիալական ոլորտների համար միջոցներ: Տնտեսական մասը, որը նաև անվանում են «ֆինանսական ծախսեր», ներառում է ջրային սեկտորի գործառնությունների պահպանման ծախսերը: Բնապահպանական ծախսերը ներառում են շրջակա միջավայրին ջրի հոսքից պատճառված վնասները, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարումը՝ վերապահելով երաշտի ժամանակ ջրի օգտագործման մեղմացման հնարավորությունները: Սոցիալական ծախսերը ենթադրում են ստորերկրյա ջրերի գերօգտագործում՝ մյուսներին ջրօգտագործումից զրկելու դեպքում:³⁶

³⁴ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0060>

³⁵ *Նույն տեղում:*

³⁶ D.5.1. Reinventing water Pricing ‘Accelerate Innovation in urban wastewater management for Climate Change’ Horizon 2020 Report

Ջրօգտագործման տարբեր տեսակների, ինչպիսիք են խմելու ջրի համար կամ ոռոգման համար վճարները տարբերվում են երկրից երկիր: Օրինակ՝ ոռոգման համար ամենաբարձր գանձումը իրականացնում են Գերմանիան, Դանիան և Նիդեռլանդները: Ամենացածր գներն ունեն Իտալիան և Նորվեգիան:

Թվարկված ԵՄ և միջազգային օրենքներից Հայաստանի համար իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերն են ՀԸԳՀ-ն և ՄԱԿ-ի Ջրի մասին կոնվենցիայի «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը, որը դեռևս վավերացված չէ Հայաստանի կողմից:

ՀԸԳՀ-ն ունի ավելի լայն շրջանակ, և վերաբերում է շրջակա միջավայրի պահպանման խնդիրներին: Մնացած թվարկված գործիքները կարող են դեր խաղալ լավագույն իրավական պրակտիկայի մեջ և/կամ օրինակ ծառայել, թե ինչպես կարելի է ստեղծել արդյունավետ գործող իրավական դրույթներ՝ համապատասխան կիրարկման մեխանիզմներով: Խորհրդատվական նպատակներով սույն ուսումնասիրությունը ներկայացնում է նաև արտասահմանյան երկրներում կիրառվող լավագույն օրինակներ:

Դանիայի փորձառությունը

Դանիան այն այն երկրներից է, որն ունի հաջող բնապահպանական կառավարում: Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ընտրել է հարկման եղանակը:

Չնայած ՁՇԴ-ն խորհուրդ է տալիս օգտագործել «հրամայել և հսկելու» պարադիգմը (CAC), Դանիան նախընտրել է հարկման եղանակը: Այն ունի իր ուրույն մոտեցումները ջրային ռեսուրսների կառավարման և այս բնական ռեսուրսի շրջակա միջավայրի պահպանման համար:

Դանիայի կառավարությունը տնտեսական մեխանիզմների օգտագործումը առաջնային է դարձրել՝ հիմնավորելով հինգ հիմնական տնտեսական կետերով:³⁷ Այս տնտեսական պատճառները համառոտ քննարկվում են գեկույցի այդ հատվածում՝ հիմնված Դանիայի հաջողված փորձի վրա:

Դանիայում գործում է իրավական կարգավորումների փաթեթ, որը փորձում է կանխել ջրային ռեսուրսների գերօգտագործումը և կառավարել բնապահպանական խնդիրները: Ջրի ողջամիտ օգտագործման համար գործում է «Ջրային միջավայրի համար գործողությունների պլանը»:

«Ջրի որակը բարելավելու համար Դանիայի կառավարությունը 1987թ.-ին մեկնարկեց ջրային միջավայրի համար գործողությունների հեռահար պլանը, որի նպատակն էր, ի թիվս այլոց, նվազեցնել ազոտի և ֆոսֆորի արտահոսքը Դանիայի ջրային հոսանքներում, լճերում և ձկնաբերում: Պլանի կիրարկումը էականորեն բարելավեց ջրային միջավայրի պայմանները: 1998 թվականին մեկնարկեց Ջրային միջավայրի նոր պլանը:

Ստորերկրյա ջրեր: Դանիայի ստորերկրյա ջրերը հիմնականում ունեն լավ որակ: Մինչև այն որպես ծորակի ջուր օգտագործելը անհրաժեշտ է միայն շատ պարզ մաքրման ձև: Ծորակի ջրի 99%-ը ստանում են ստորերկրյա ջրային ռեսուրսներից: Սակայն առկա բարվոք իրավիճակի պահպանման սպառնալիքներ կան: Գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվող

³⁷https://www.researchgate.net/publication/282163217_Command-AndControl_or_Taxation_The_Cases_of_Water_Regulation_in_California_and_Denmark

թունաքիմիկատների ու նիտրատների արտանետումները պոտենցիալ վտանգ են հանդիսանում ստորգետնյա ջրերի համար, որոնց որակը վերահսկվում է Ջրային միջավայրի առաջին գործողությունների ծրագրի իրականացումից ի վեր:

Մակերևութային ջրեր: Դանիայում կան բազմաթիվ ջրային հոսքեր և լճեր: Ջրահոսքերի մեծ մասը պաշտպանված է: Նրանց վիճակը գնահատելու համար սահմանվել է չափորոշիչների սանդղակ: Համաձայն այդ սանդղակի՝ 1993-96 թվականներին որակը բավականին կայուն է եղել, իսկ վերջին տարիներին գրանցվել է չնչին բարելավում: Ինչպես մյուս արդյունաբերական երկրները, Դանիայի լճերը նույնպես տուժում են, օր.՝ ֆոսֆորի և ֆոսֆատի արտանետումներից: Այս արտանետումները աստիճանաբար նվազում են, սակայն ջրի որակի բարելավման համար բավականին երկեր ժամանակ է պահանջվում: Շրջակա միջավայրի կառավարման օրենսդրական փաթեթում էական դեր է խաղում Շրջակա միջավայրի պաշտպանության ակտը, որը կարգավորում է պաշտպանության գործընթացները «ադտոտողը վճարում է» սկզբունքի համաձայն:³⁸

Դանիայում շրջակա միջավայրի պաշտպանության դերակատարներն են Շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Հարկերի գանձման նախարարությունը և այլ համապատասխան ոլորտների նախարարություններ: Ընդհանուր պատասխանատվությունը կրում է հարկային նախարարությունը: Տնտեսական գործիքների դեպքում Շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարարությունը մեծապես համագործակցում է Հարկերի գանձման նախարարության հետ: Այս փոխազդեցությունն ավելի ընդգծված է դարձել վերջին տարիներին: Մա կարող է դիտվել որպես շրջակա միջավայրի պահպանության ոլորտում տնտեսական գործիքների ներուժի բարձր գնահատման արտացոլում:³⁹

Դանիայում ջրօգտագործման հարկման մեթոդը

Բնական ռեսուրսների սպառման հարկումն ընդունելի է Դանիայի համար, քանի որ այն ունի բոլոր համապատասխան կանոնակարգերն ու կիրարկման մեխանիզմները: Մասնավորապես, հարկումը նպաստում է երկրի համար հինգ տնտեսական օգուտների ձեռքբերմանը.

- հարկումը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող (externalities) ծախսերն արտացոլում է տնտեսական գործունեության արդյունքում արտադրվող ապրանքների և ծառայությունների գների մեջ;
- «կանաչ հարկերը» խթանում են շրջակա միջավայրը վնասող գործողությունները կանխելու գործընթացը: Ի լրումն արտաքին բնապահպանական ծախսերի ներառման համար հարկերի կիրառումը, հարկումը կարող է նաև օգտագործվել վարքագծի փոփոխությունները խրախուսելու համար:
- «կանաչ հարկերը» կարող են նաև խրախուսել նորարարությունը և նոր տեխնոլոգիաների զարգացումը: Եթե ջրի (և նման ռեսուրսների) գները բարձրացվեն կանաչ հարկերի միջոցով, մարդիկ շահագրգռված կլինեն գտնելու իրենց կարիքները բավարարելու նոր ուղիներ՝ այդպիսով հանգեցնելով նոր տեխնոլոգիաների ու գործընթացների զարգացմանը:

³⁸[Chapter 2, Economic Instruments in Environmental Protection in Denmark \(mst.dk\)](#)

³⁹ Նույն տեղում:

- հարկերից ստացված եկամուտը կարող է օգտագործվել նաև այլ հարկերը նվազեցնելու համար (օրինակ՝ աշխատանքային հարկերը) կամ սուբսիդավորել սպառողներին, որոնք իրականացնում են էկոլոգիապես ավելի անվտանգ գործունեություն՝ այդպիսով երկրորդ խթան հանդիսանալով շրջակա միջավայրի բարելավման համար:
- Հարկերը ենթադրում են ավելի քիչ վարչարարություն և «նվազեցնում են գործակալության դերը՝ որոշումների կայացումը բյուրոկրատիայից դեպի մասնավոր սեկտոր տեղափոխելով» (Stavins, 2003, էջ 14):

Համեմատելով հարկային վճարումները Հրամայել և հսկելու քաղաքականության հետ, ակնհայտ է, որ զարգացած կառավարման համակարգեր ունեցող երկրի համար շատ ավելի հեշտ է բնական ռեսուրսների օգտագործման հարկումը: Հարկման մեթոդն արդյունավետ է հատկապես այն դեպքում, երբ ջրային ռեսուրսների օգտագործման գները ֆիքսված չեն և խմբից խումբ տարբերվում են՝ հաշվի առնելով իրավաբանական և ֆիզիկական անձանց վճարման հնարավորությունները:

Ջրի հարկման գործընթացը Դանիայում համարվում է հաջողված, քանի որ այն ժամանակին կարող էր վերահսկել ջրի սպառումը և ապահովել ռեսուրսի կորուստների կանխումը:

«Դանիայում խողովակային համակարգով մատակարարվող ջրի համար հարկումը սահմանվել է 1994 թվականին: Այնժամ ջրի պակաս չկար, և նպատակը կեղտաջրերի քանակը նվազեցնելն էր: 1994 թվականին ջրի հարկը կազմում էր 1,0 դանիական կրոն (DKK) մեկ մ3 ջրի համար (0,75 եվրոյի համարժեք): Ջրի հարկն անմիջապես ազդեց ջրի սպառման վրա: Խմելու ջրի մատակարարումը 1993-ից 1995 թվականներին կրճատվել է 513-ից մինչև 480 մլն մ3: 2014 թվականին ջրի հարկը դանդաղորեն աճել է մինչև 6,1 DKK/մ3 (0,8 եվրոյին համարժեք), իսկ 2015-ին՝ 6,5 DKK/մ3 (0,9 եվրոյին համարժեք)՝ ներառյալ լրացուցիչ խմելու ջրի հարկը: Ձեռնարկությունների համար խողովակային համակարգի ջրի հարկը փոխհատուցվում էր:

Կեղտաջրերի հարկի հետ մեկտեղ ջրի հարկը շարունակաբար նվազեցրել է տնային տնտեսություններում ջրի սպառումը: Ջրմուղային կառույցները նաև ջրի հարկ են վճարում խողովակների համակարգում արտահոսքի պատճառով ջրի թափոնների համար, եթե թափոնները կազմում են ընդհանուր ջրի արտադրության 10%-ից ավելին. սա էլ իր հերթին հանգեցնում է ջրատարներից ջրի արտահոսքի զգալի կրճատմանը»:⁴⁰

Ջրի վերաօգտագործման փորձերը Վրաստանում

Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանը ջրի սակավության խնդիր չունի: Այնուամենայնիվ, այն նաև ձգտում է կիրառել ջրի վերաօգտագործման քաղաքականությունն ու օրենքները, հետևել արևմտյան երկրների հաջողված փորձին:

Ըստ ՏՀԶԿ-ի «Վրաստանն ունի ջրային առատ պաշարներ: Նրա տարեկան վերականգնվող քաղցրահամ ջրի հասանելիությունը մեկ շնչի հաշվով հետևողականորեն ամենաբարձրն է ԱլԳ երկրների միջև (օր.՝ 12 418 մ3 2017 թվականին՝ Բելառուսի 6 355 մ3-ի համեմատ, որը ըստ վարկանիշի ԱլԳ հաջորդ երկիրն է) Ընդհանուր առմամբ, ազգային մակարդակով Վրաստանը չի տուժում ջրային սթրեսից: Հաշվի առնելով երկրի կայուն բնակչությունը և ջրառի տեմպերը՝

⁴⁰ https://green-budget.eu/wp-content/uploads/The-most-successful-environmental-taxes-in-Denmark-2_FINAL.pdf

Վրաստանը չի բախվում ջրի անվտանգության նույն ռիսկերին, ինչպես իր ԱլԳ գործընկերներից շատերը»:⁴¹

Այնուամենայնիվ, Վրաստանը բախվում է կեղտաջրերի մաքրման հետ կապված նույն խնդրին. «Վրաստանում ջրային մարմիններ թափվող կեղտաջրերի ավելի քան 1/3 իրականացվող մաքրումն անբավարար է: Հետևաբար, ջրի որակը մեծապես կախված է արտանետվող կեղտաջրերի տեսակից և դրանց մաքրման մակարդակից: Գյուղատնտեսական կարիքների համար մակերևութային ջրերի ջրառը ավելի քան կրկնապատկվել է 2003 թվականից ի վեր: Գյուղատնտեսության հետ կապված աղտոտիչների ավելի բարձր կուտակումներ են գրանցվել գյուղատնտեսական տարածքների մոտ տարավացման պատճառով»:⁴² Զանի որ Վրաստանը սկսել է իր օրենքներն ու քաղաքականությունները ԵՄ-ի հետ մոտեցնելու ընթացքը ԵՄ-Վրաստան Ասոցացման համաձայնագրի պահանջներին համապատասխան, այն պետք է կիրառի օրենքի նմանատիպ դրույթներ և օգտագործի եվրոպական օրինակը: Օր.՝ ջրի կառավարման մասին օրենքի նոր նախագիծը լիովին համապատասխանում է Ջրի շրջանակային հրահանգին, նշվում է ՏՀԶԿ-ի կողմից:⁴³

Վրաստանի Հանրապետությունն ունի ջրի կառավարման նմանատիպ խնդիրներ, ինչպիսին Հայաստանինն են: Միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված քաղաքականության մեջ դժվար է գտնել ջրի վերաօգտագործման պլանները և/կամ նախագծերը: Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանը բախվում է կեղտաջրերի մաքրման կիրառմանը՝ պայմանավորված իր միջազգային պարտավորություններով: Հայաստանը պետք է նման լուծում կիրառի իր ջրային ռեսուրսները պաշտպանելու և ջրի սակավության խնդրի դեմ պայքարելու համար:

2015 թվականին PricewaterhouseCoopers-ը (PWC) Վրաստանի համար ջրի սակագնի մեթոդաբանական վերլուծություն է իրականացրել և բացահայտել առկա բոլոր խնդիրները, երկրին տվել սակագների հաշվարկման լուծումներ:

«Քաղաքային տնային տնտեսությունների միայն 78 տոկոսն է միացված ջրամատակարարման և կոյուղու համակարգին, և 29 կեղտաջրերի մաքրման կայաններից միայն հինգն ունեն սահմանային ֆունկցիոնալություն: Նույնիսկ քաղաքային բնակավայրերում ջրի մատակարարումը հաճախ ընդհատվում է: ԵՄ ասոցացման համաձայնագրի ստորագրումը նոր պահանջներ է ստեղծում՝ խթանելով խոշոր ներդրումների անհրաժեշտությունը հետևյալ ոլորտներում՝ ջրի որակ, ջրային ռեսուրսների կառավարում, կեղտաջրերի մաքրում, շրջակա միջավայրի պահպանություն:⁴⁴ Այս ուսումնասիրությունը տեղեկատվություն է տրամադրում Վրաստանում ջրի սակագների մասին «Մինչև 2010թ. սեպտեմբերը ջրաչափերը կամավոր էին բնակչության համար: Ներկայումս ջրօգտագործողների մեծ մասը դեռևս ապահովված չեն ջրաչափերով: Ջրի ներկայիս ցածր սակագները չեն խրախուսում ջրաչափեր տեղադրելու համար ներդրումներ կատարելու գործընթացը: Ջրից անօրինական օգտվելու համար ցածր տուգանքները չեն կանգնեցնում պոտենցիալ չարաշահողներին և նպաստում են կոմերցիոն կորուստների բարձր մակարդակին: Թերի ենթակառուցվածքները հանգեցնում են բարձր տեխնիկական կորուստների: Ներկայումս քիզնես ոլորտի համար ջրի սակագինը 20 անգամ

⁴¹ <https://www.oecd-ilibrary.org/sites/4e4ec92d-en/index.html?itemId=/content/component/4e4ec92d-en#section-d1e5073>

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ https://www.gwp.ge/storage/wysiwygs/files/PWC-Tariff_Methodology_Review.pdf

ավելի բարձր է, քան հաշվառված բնակիչ բաժանորդների համանման սակագները: Բնակիչների համար հաստատված ցածր սակագները թույլ չեն տալիս փոխհատուցել առկա ծախսերը և, հետևաբար, չեն համապատասխանում սակագների կարգավորման հիմնական սկզբունքներին»:⁴⁵

Ինչպես նշվեց, Վրաստանը տարբեր տեսակի ջրի սպառման համար ունի տարբեր դրույքաչափեր: Ջրի սակագները սահմանված են հետևյալի համար.

«Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների համար սահմանված սակագինը պետք է ներառի ոչ միայն ջրի որակն ու սպասարկումը, այլև տարբեր տեսակի վերականգնողական, կանխարգելիչ և անհետաձգելի աշխատանքները:

2008թ.-ից Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի (GNERC) իրավասությունն է սահմանել ջրամատակարարման և կոյուղու համակարգերի սակագները և դրանցում ցանկացած փոփոխություն կատարել:

Այս բազմաբաղադրիչ սակագնային մոտեցումը նման է Միացյալ Թագավորության մոտեցմանը և օգնում է Վրաստանի Հանրապետությանը վերահսկել ջրային ռեսուրսների օգտագործումը աշխարհագրական բարդ հանգամանքներում: Սակայն ուսումնասիրություններում և սակագների ցանկում հնարավոր չէ գտնել ջրի վերաօգտագործման, վերամշակման և/կամ երկրորդական օգտագործման գները:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը նախատեսում է կեղտաջրերի արտահոսքի տույժերը և դրույքաչափերը: Այնուամենայնիվ, այս դրույքաչափերն ու սակագները բավարար չեն շրջակա միջավայրի պահպանման և վերահսկման համար:

ԱՄՆ-ի «հրամայել և հսկելու» քաղաքականությունը

Այս ուսումնասիրության մեջ առաջարկվում է դիտարկել ջրային սեկտորի կառավարման համար «հրամայել և հսկելու» մեթոդը: Այս մեթոդի լավագույն օրինակը ԱՄՆ-ն է: «Հրամայել և հսկելու» կանոնակարգը սահմանում է իրավական տեսանկյունից պարտադիր պահանջներ և ադոտոման վերահսկման տեխնոլոգիաների միջոցով սահմանում է ադոտոման հստակ սահմանափակումներ: Այս մեթոդը շրջակա միջավայրը վերահսկելու և պահպանելու լավագույն մեթոդներից է: Այնուամենայնիվ, այն ունի որոշ թերություններ, ինչպիսիք են ադոտոման վերահսկման գործընթացում ճկունության բացակայությունը և սահմանված կանոնների համար խթանների բացակայությունը:

«Հրամայել և հսկելու կարգավորման մեթոդը մեծ հաջողություն է ունեցել ԱՄՆ-ի շրջակա միջավայրի պաշտպանության և մաքրման գործում: 1970 թվականին ստեղծվեց Շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը, որը պետք է վերահսկեր բնապահպանական բոլոր օրենքները: Նույն թվականին ընդունվեց «Մաքուր օդի մասին» օրենքը՝ օդի ադոտոմանության դեմ պայքարելու համար: Ընդամենը երկու տարի անց՝ 1972 թվականին, ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց և նախագահը ստորագրեց «Մաքուր ջրի մասին» հեռահար ակտը: Հրամայել և հսկելու մեթոդով այս բնապահպանական օրենքները և դրանց փոփոխություններն ու թարմացումներն են, որ ապահովել են վերջին տասնամյակների

⁴⁵ Նույն տեղում:

ընթացքում Միացյալ Նահանգներում մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների կառավարումը: Այնուամենայնիվ, տնտեսագետները վերհանել են երեք խոչընդոտ՝ կապված հրամայել-հսկելու բնապահպանական կարգավորման հետ»:⁴⁶

«Կալիֆորնիայի քաղաքականություն մշակողները մինչ այժմ օգտագործել են հրամայել-հսկելու (CAC) կանոնակարգերը՝ որպես նահանգի համար ջրի կառավարման հիմնական գործիք:

Ջրի վերօգտագործման գործողությունների ծրագիրն ԱՄՆ-ում մշակվել է 2019 թվականից, սակայն ԱՄՆ-ի որոշ քաղաքներ 20-րդ դարի վերջից արդեն իսկ կիրառում են երկրորդային ջրի օգտագործումը: «Վերջին տասնամյակի ընթացքում վերամշակված ջրի ջատագովները հաջողել են հանրությանը համոզելու, որ ռոռզման համար վերամշակված ջուրն ունի մի շարք առավելություններ: Այդ «խոչընդոտը» մեծ մասամբ հաղթահարված է: Սակայն հանրության կողմից շարունակում են ծագել նորանոր հարցեր ու մտահոգություններ վերամշակված ջուրը՝ որպես խմելու ջրի աղբյուր օգտագործելու վերաբերյալ: Այսօր գիտությունն ու տեխնոլոգիան հնարավորություն են տալիս վերամշակված ջուրը մաքրել խմելու ջրի չափանիշներին համապատասխան: Սակայն, դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ որպես անուղղակի ջրամատակարարման աղբյուր, քաղաքացիները երկմտում են բարձր մակարդակի վերամշակված ջուրն ընդունել՝ որպես խմելու ջրի ընդունելի տարբերակ: Նման քաղաքներից մեկը Կալիֆորնիայի Սան Դիեգոն էր: Մեկ այլ քաղաք, որը փորձել է օգտագործել երկրորդական ջուրը, Ֆլորիդայի Քեյփ Քորալն է: Երկրորդային ջրի օգտագործման առաջին 8 տարիների ընթացքում Քեյփ Քորալը կարողացավ խնայել ավելի քան 4 միլիարդ գալոն (15 միլիոն մ3) խմելու ջուր, որը նախկինում կօգտագործվեր ռոռզման նպատակներով:

ԱՄՆ-ում ուսումնասիրված օրինակներում նահանգները ներգրավված են երկրորդային ջրի մաքրման աշխատանքներում՝ այլ նպատակներով օգտագործելու համար և վերադարձնում են սպառողներին ջրի վճարները: «Վեամշակված ջրի և խմելու ջրի միջև նկատվող անհավասարությունները կարող են վերացվել, երբ խմելու ջուրը պակասում է և ենթակա է սեզոնային (կամ մշտական) սահմանափակումների: Հանախորդների համար, ովքեր չեն կարող հանդուրժել մատակարարումների անորոշությունը, վերամշակված ջրի աղբյուրը, որը զերծ է սահմանափակումներից, կարող է ավելի արժեքավոր լինել, քան ջրի ավանդական մատակարարումն է: ⁴⁷

3.1.ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՑ և ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻՑ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ

Ջրային ռեսուրսների կառավարման, վերահսկման և կազավորման գործում հաջողության հասնելու փորձերի ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել, գնահատել և ուսումնասիրել երկրի սոցիալական, տնտեսական և բնապահպանական ոլորտներում առկա բոլոր տեղեկատվական աղբյուրները: Քաղաքականությունը, օրենքները, տեխնիկական և տնտեսական մեխանիզմները պետք է գնահատվեն և համաձայնեցվեն՝ համապատասխան կանոնակարգերի մշակման, դրանց կիրառման և կիրարկման գործընթացի հետ, երբ մշակվում

⁴⁶<https://www.khanacademy.org/economics-finance-domain/microeconomics/market-failure-and-the-role-of-government/environmental-regulation/a/command-and-control-regulation-cn-x>

⁴⁷ Նույն տեղում, բաժին 6.4:

են իրավական և տնտեսական գործիքներ: Սույն ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ԵՄ անդամ երկրները սկսել են ջրի վերաօգտագործման սխեմաների իրականացումը դեռևս ԵՄ կենտրոնական օրենքների կիրառումից առաջ: Իրավական և քաղաքականության համապատասխանության գնահատումը սկսվել է 2012 թվականին՝ բացթողումներն ու ապակողմնորոշիչ գործընթացները պարզելու համար, քանի որ ջրային ռեսուրսների կորուստը համարվում էր էական մարտահրավեր ԵՄ-ի համար: Միայն գոյություն ունեցող բոլոր իրավական, քաղաքական և կարգավորող գործիքների մանրամասն ուսումնասիրությունից հետո ԵՄ-ն նախաձեռնեց նոր կանոնակարգ ջրային ռեսուրսների վերօգտագործման նվազագույն պահանջների վերաբերյալ:

«Ջրի գնագոյացման քաղաքականությունը պետք է հաշվի առնի թե՛ մակերևութային, թե՛ ստորերկրյա ջրի աղբյուրները, ինչպես նաև մաքրված ջրերը: Սա կսահմանափակի հնարավոր բացասական հետևանքները, որոնք կարող են ունենալ ջրի մի աղբյուրի համար ավելի արդյունավետ գնագոյացման զարգացումը ջրի մյուս աղբյուրի համեմատ: Այնուամենայնիվ, բոլորովին պարտադիր չէ, որ ջրի տարբեր աղբյուրների համար օգտագործման նույն գինը հաստատվի: Օրինակ՝ այն դեպքում, երբ կա շատ սահմանափակ, լավ որակի ստորերկրյա ջրերի աղբյուր, մակերևութային ջրերի ցածր գները կարող են խրախուսել մակերևութային ջրերի օգտագործումը տնտեսական ոլորտներում՝ պահպանելով լավ որակի ստորերկրյա ջրերը տնային տնտեսությունների կարիքների և մարդկանց սպառման համար: Նոր գնային քաղաքականության վարչական ծախսերի գնահատումն անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորվի, որ կանխատեսվող ձեռքբերումները արդյունավետությամբ գերազանցում են նոր համակարգի ստեղծման և կառավարման ծախսերը: Նման ծախսերը կարող են հատկապես բարձր լինել, երբ մշակվում են բարդ քաղաքականություններ, որոնք ներառում են մանրամասն մոնիտորինգ և չափումներ կամ բնապահպանական և ռեսուրսների ծախսերի մեծ շրջանակի գնահատում:

Ջրի գնագոյացման քաղաքականությունը պետք է ներառի նաև իրականացման պլան: Ջրի գնագոյացման նոր համակարգի կիրարկումը, որն հաշվի է առնում տնտեսական և բնապահպանական սկզբունքները, պետք է իրականացվի փուլ առ փուլ և՛ մատչելիության, և՛ քաղաքականության ընդունելի լինելու պատճառով: Սա հատկապես կարևոր է այն օգտատերերի և ոլորտների համար, որոնք ներկայումս չեն վճարում ծառայությունների ամբողջական ֆինանսական ծախսերը (օրինակ՝ գյուղատնտեսությունը) կամ որոնք արդեն կարող են բախվել մատչելիության հետ կապված խնդիրների (օրինակ՝ որոշ սոցիալական խմբեր):⁴⁸

Միջազգային հաջողված փորձերից քաղված դասերն են.

- գործող բոլոր կանոնակարգերի մանրամասն հետազոտություն ու վերլուծություն և երկրի ներսում գործնական օգտագործման և միջազգային պահանջներին դրանց համապատասխանության ստուգում;

⁴⁸Հանձնաժողովի հաղորդագրությունը Խորհրդին, Եվրոպական խորհրդարանին և Տնտեսական և սոցիալական կոմիտեին, Ջրային ռեսուրսների կայունության բարձրացման գնագոյացման քաղաքականությունը:

- ներդաշնակեցնել գոյություն ունեցող քաղաքականությունները, օրենքները և կանոնակարգերը միմյանց հետ՝ առկա բացերը բացառելու և փաստաթղթերի ամբողջական փաթեթում միասնական պահանջներ սահմանելու համար;
- ներկայացնել ողջամիտ գներ՝ հիմնված ծախսերի և օգուտների վերլուծության վրա;
- ազդել սպառողների մտածելակերպի և վարքագծի վրա բնական ռեսուրսների սպառման գործընթացում ողջամիտ մոտեցման համար;
- պարտավորվել պայքարել ջրի խնայողության և ջրի հսկայական կորստի դեմ, նույնիսկ եթե դա պահանջում է սահմանափակել սպառումը բարձր հարկերի միջոցով;
- համապատասխանել ԵՄ շրջանաձև տնտեսության ուղու և դրա հետ վավերացված բոլոր իրավական ու քաղաքական կանոնակարգերին;
- հաստատել պատշաճ կառավարում և կառավարման կամք նորարարությունների և հնարավոր լավագույն տարբերակներ գտնելու համար;
- քննարկված հաջողված փորձի շրջանակներում երկրները ձեռնարկում են խնդիրների մանրամասն գնահատում և ներգրավում մասնագիտացված ընկերություններին, որպեսզի համաձայն երկրի առանձնահատկությունների գտնեն լավագույն հնարավոր լուծումներ;
- հարկային մոդելն ավելի արդյունավետ է, քան «հրամայել և հսկելու» մեթոդը, սակայն Հայաստանում բնապահպանական մարտահրավերների դեմ պայքարի համար CAC-ը լավագույն տարբերակն է:

ԳԼՈՒԽ 4՝ ՋՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ (ԿՐԿՆԱԿԻ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործման ծավալները նույնիսկ առկա հսկայական կորուստների պարագայում զգալիորեն զիջում են վերականգնվող ջրային ռեսուրսների ծավալներին, առաջարկվում է առաջին փուլում երկրորդային ջրօգտագործման խնդիրները համակարգել երկու առավել խնդրահարույց ոլորտներում, որոնցից մեկը Արարատյան դաշտում ձկնաբուծական տնտեսություններից արտահոսող ջրային ռեսուրսներն են, որոնք կարող են օգտագործվել ոռոգման նպատակներով, իսկ երկրորդ ոլորտը արդյունաբերության, մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտում երկրորդային ջրօգտագործման հնարավորություններն են:

Ինչպես արդեն նշվել է այս հաշվետվության մեջ, ջրօգտագործման վճարների ցածր դրույքաչափերը որևէ կերպ չեն խթանում ջրի խնայողությունը, կլինի դա երկրորդային ջրօգտագործման թե նոր տեխնոլոգիաների ներդրմամբ առավել պակաս ջրօգտագործման ծավալների միջոցով և առկա բնօգտագործման վճարների համակարգի արմատական փոփոխություն չիրականացնելու դեպքում երկրորդական ջրօգտագործման խթանումը բավական խնդրահարույց է:

4.1. ԶԿՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐ

Հայաստանի Արարատյան դաշտում իրավիճակը ուսումնասիրվել և գնահատվել է տարբեր տեսանկյուններից և մոտեցումներից, սակայն ջրի օգտագործման ծախս-օգուտների վերլուծությունը, ջրի կայուն օգտագործման մեթոդները, ինչպես նաև ջրային ռեսուրսների արդյունավետ սպառումը և կորուստների կանխման ձևերը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

ԱՄՆ ՄՉԳ-ի կողմից Հայաստանում իրականացված Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների վերաբերյալ վերջին հետազոտական աշխատանքում ասվում է հետևյալը. «Տասնամյակներ շարունակ Արարատյան բերրի դաշտում ջրի օգտագործումը տուժել է անհատ օգտատերերի եսակենտրոն մոտեցումից (Tragedy of the commons): Կոռուպցիան և գոյություն ունեցող կանոնակարգերի թերի կիրարկումը, հնացած տվյալների և հաշվարկների արդյունքում ընդունված կառավարության որոշումները, ձկնաբուծարանների թվի արագ աճը և թերարգացած ենթակառուցվածքները հանգեցրել են նրան, որ օգտվողները մի քանի անգամ շատ ջուր են արդյունահանում, քան բնական վերալիցքավորման ներուժն է: Այս գերշահագործման պատճառով 2013-ից 2020 թվականներին ստորերկրյա ջրերի մակարդակը միջինը նվազել է 6-ից 9-ը մետրով, իսկ որոշ տարածքներում՝ մինչև 15 մետրով: Արարատյան դաշտի 30-ից ավելի համայնքները գրկվել են խմելու և ոռոգման ջրի հասանելիությունից»:⁴⁹ Թեև ԱՄՆ ՄՉԳ-ն հայտնում է, որ այս մարզում իրականացվող ծրագիրը կայուն ճանապարհ է հարթում ողջ տարածաշրջանի համար, ՀՀ կառավարության կողմից իրականացվելիք քայլերի կարիք նույնպես կա, հատկապես երկրորդային ջրօգտագործման ոլորտը

⁴⁹<https://www.usaid.gov/armenia/news-information/news/saving-water-strengthening-oversight-armenias-water-resources>

գարգացնելու և կեղտաջրերի վերամշակման ու օգտագործման համար համապատասխան հարկային վճարները վերանայելու ուղղությամբ:⁵⁰

ՀՀ կառավարությունը ձկնաբուծությունը համարում է կայուն հաստատված բիզնես Հայաստանում, այն նաև ընդունում է վերջինիս բնապահպանական և սոցիալական վտանգները, որ այս բիզնես սեկտորը հասցնում է երկրին: Սահմանվել են նաև այնպիսի կարգավորումներ, որոնք կապի մեջ են դնում օգտագործված ջրի քանակը և այդ ջուրն օգտագործելու արդյունքում արդյունաբերական արտադրանքի քանակը:⁵¹

Ի տարբերություն Սևանա լճի, որտեղ ջրօգտագործումը կարգավորվում է օրենքով, 34,7 մ3/վ գործառնական ռեժիմը հաստատվել է միայն 1984թ. թիվ 9475 որոշմամբ՝ առանց այլ իրավական սահմանափակումների:

Մինչև 2007 թվականը ջրօգտագործման թույլատրելի ծավալը գերազանցվել է միայն 1,9 մ3/վ-ով (ընդամենը 36,5 մ3/վրկ., ձկնորսություն՝ 12,7 մ3/վ):

2007 թվականից մինչև 2013 թվականը ջրօգտագործման ծավալն աճել է մինչև 55,6 մ3/վ-ով. այդ ժամանակահատվածի համար տրված լրացուցիչ 202 ջրօգտագործման թույլտվություններն ավելացրել են ոլորտի կողմից ջրօգտագործումը ավելի քան 3 անգամ՝ 12,7 մ3/վրկ-ից մինչև 35,5 մ3/վ:

Արդյունքում՝

- կրճատվել է դրական ճնշման տարածքը՝ 2013 թվականին 10706 հա, ի տարբերություն 1983 թվականի 32760 հա-ի;
- 31 համայնք մասամբ կամ ամբողջությամբ զրկված է ոռոգումից (8180 հա վարելահողեր) և խմելու կենցաղային ջրից;
- խմելու և ոռոգման նպատակով օգտագործվող 122 հորերն այլևս պիտանի չեն;
- ձկնարտադրության նպատակով արտեզյան գոտու 127 հորեր այլևս պիտանի չեն;
- մարզում ոռոգման նորման բարձրացել է 10%-ից մինչև 20%:

Ինչպես նշվեց, ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվում են համապատասխան միջոցներ Հայաստանում ձկնարդյունաբերությունը խթանելու և Արարատյան դաշտի ջրային ռեսուրսները պահպանելու համար: Միաժամանակ համապատասխան սուբսիդիաներ են տրամադրվում բիզնեսին և նպաստում դրա զարգացմանը: Օրինակ, ձկնաբուծության ոլորտը նույնպես ստացել է պարզեցված հարկման արտոնություններ ինչպիսիք են .

1. Համաձայն ՀՀ պետական տուրքի մասին 19.4-րդ հոդվածի 7-րդ կետի՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար ֆիզիկական անձանց համար տուրքը կազմում է ընդամենը 1000 դրամ, իսկ իրավաբանական անձանց համար՝ 10 000 դրամ:
2. Համաձայն Հարկային օրենսգրքի, ձկնաբուծության համար 1մ3 ջրի օգտագործման դրույքաչափը 1.3 դրամ է, հաշվարկները հիմնված են ջրի օգտագործման 50 տոկոսի վրա:

Այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչպես կարելի է ջրային ռեսուրսները բաշխել տարբեր օգտագործողների միջև, որպեսզի դա միաժամանակ լինի առավել արդյունավետ: Այս դեպքում առանցքային գործոնը երկրի համար արտադրվող առավելագույն արդյունաբերական արտադրանքն է: Սա նշանակում է, որ տարբեր ջրօգտագործողների կողմից ջրի

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ <https://www.primeminister.am/en/press-release/item/2019/08/29/Nikol-Pashinyan-Cabinet-meeting/>

օգտագործման ծավալներն օպտիմիզացված են այնպես, որ առավելագույն արդյունք ապահովող սեկտորներն ունենան ջրային ռեսուրսի ավելի մեծ հասանելիություն, իսկ պակաս արդյունավետ սեկտորների կորցրած օգուտները կփոխհատուցվեն ավելի արդյունավետ ջրօգտագործման ոլորտներով:

Այսպիսով, արդյունավետությունն է այն ուղենիշը, որով կորոշվի, թե որ ջրօգտագործումն է ավելի խելամիտ ընդհանուր բարեկեցության տեսանկյունից՝ հաշվի առնելով Ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածում նշված սահմանափակումները, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված էկոլոգիական հոսքի (ecological flow) սահմանները:

Տարբեր ոլորտների միջև ջրային ռեսուրսների բաշխման տնտեսական ազդեցությունը կարող է ներկայացվել ՀՆԱ-ի աճով: Այսպիսով, մոդելը հնարավորություն կտա առավելագույնի հասցնել դեֆիցիտ ռեսուրսի (այս դեպքում ջրի) արտադրողականությունը ջրի բաշխման միջոցով:

Որպես հավասարում, օպտիմալացումը եկամուտների մաքսիմալացումն է՝ հաշվի առնելով դիսկոնտի գործակիցը.

$$\text{MAX GDP} = Dt(Wp,tD+Wp,tI+Wp,tA+Wp,tH), \text{ որտեղ}$$

MAX GDP – մաքսիմալ ՀՆԱ

Dt – «t» դիսկոնտի ժամանակահատվածը

Wp,t – ջրի գինը «t» ժամանակահատվածի համար

D – խմելու և կենցաղային ջրի օգտագործումը

I – արդյունաբերական ջրօգտագործում

A – գյուղատնտեսական ջրօգտագործում

H – հիդրոէներգետիկ ջրօգտագործում

Չափազանց կարևոր է ճշգրիտ ներկայացնել ջրի պահանջարկը և հասանելի ջրային ռեսուրսները, քանի որ առաջարկի և պահանջարկի սխալ ներկայացումը անխուսափելիորեն հանգեցնում է մոդելի ոչ ճշգրիտ աշխատանքի, անկախ նրանից, թե որքան կատարելագործված է այդ մոդելը:

Սակայն, համեմատած ազատ շուկայական հարաբերությունների հետ, որտեղ գինը որոշվում է առաջարկի և պահանջարկի հիման վրա, ջրային ռեսուրսների կառավարումը խստորեն կարգավորվում է ըստ սպառման առաջնահերթությունների, ինչը փաստացի անհնար է դարձնում ազատ գնազույացումը: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտերը քննարկելիս Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն առաջնորդվում է սահմանափակ ջրային ռեսուրսները մրցակցող շահագրգիռ կողմերի միջև բաշխելու գերակայությունները սահմանող հետևյալ չափանիշներով՝

1) առաջնահերթությունը տրվում է մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանը (ինչպես դա սահմանվում է ազգային ջրային պաշար

հասկացությամբ)՝ առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունը.

2) երկրորդ գերակայությունը տրվում է բնական ջրահոսքերի հուններից ջրառ չպահանջող ավանդական ջրօգտագործումներին.

3) երրորդ գերակայությունը տրվում է հասարակական շահի համար առավելագույն օգուտներ ապահովող ջրօգտագործման թույլտվության հայտերին.

4) չորրորդ գերակայությունը տրվում է այն անձանց, որոնք առաջարկում են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խրախուսմանն ու որակի բարելավմանն ուղղված որոշակի միջոցառումներ:

Արարատյան դաշտում նորարարական ձկնաբուծարանների զարգացման փորձեր են արվում: Սակայն աջակցվող ֆերմաների տեմպերն ու քանակը խիստ ցածր են: Այս փորձերը պետք է խրախուսվեն ՀՀ կառավարության կողմից և պետք է գործարկվեն հատուկ ծրագրեր՝ այս հարցի բոլոր շահագրգիռ կողմերին գործընթացին ինտեգրելու համար:⁵²

Ջրային ռեսուրսների ոլորտում որոշումներ կայացնելու գործընթացը պետք է ներառի հետևյալ խնդիրների հասցեագրումը.

1. Ջրօգտագործման վճարների համեմատական վերլուծություն՝ համեմատելով ջրային ռեսուրսների կառավարման, համակարգման, վերահսկողության, մշտադիտարկման, իրականացման և այլ գործառնություններ: Այս բաղադրիչը հնարավորություն է տալիս որոշելու, թե արդյոք ջրի օգտագործման վճարները բավարար են ջրային ռեսուրսների կառավարման բոլոր ծախսերը և ինքնարժեքը ծածկելու համար: Այս կետը ներառում է «վճարում է աղտոտողը», «վճարում է օգտագործողը» և «ջուրը վճարում է ջրի համար» սկզբունքների կիրառումը:
2. Արդյունավետություն. ինչպես ջրային ռեսուրսները բաշխել տնտեսական, սոցիալական և բնապահպանական օգտագործողների միջև՝ ստանալով առավելագույն արդյունք: Այս դեպքում կրիտիկական գործոնը երկրի համար արտադրվող առավելագույն արտադրանքն է: Սա նշանակում է, որ տարբեր ջրօգտագործողների կողմից ջրի օգտագործման ծավալներն օպտիմիզացված են այնպես, որ առավելագույն արդյունք ապահովող սեկտորները ստանան ջրային ռեսուրսի ավելի մեծ հասանելիություն, իսկ պակաս արդյունավետ սեկտորների կորցրած օգուտները փոխհատուցվեն ավելի արդյունավետ ջրօգտագործման ոլորտներով: Այսպիսով, արդյունավետությունն է այն ուղենիշը, որով կորոշվի, թե որ ջրօգտագործումն է ավելի խելամիտ ընդհանուր բարեկեցության տեսանկյունից՝ հաշվի առնելով Ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածում նշված սահմանափակումները, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված էկոլոգիական հոսքի (ecological flow) սահմանները:
3. Խնայողություն. ինչպես նվազեցնել ջրի օգտագործումը: Խոսքը հիմնականում տեխնիկական խնդիրների մասին է. ինչպես կարելի է նվազեցնել ջրի օգտագործման և ջրի կորուստների ծավալները նոր և ավելի արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով: Խնայողության խնդիրներն ուղղակիորեն կապված են 1-ին կետի հետ, քանի որ խնայողությունների արդյունքում գոյացած ջրային ռեսուրսները կարող են օգտագործվել նաև այլ ոլորտներում բաշխման համար:

⁵² <https://medium.com/usaid-2030/partnering-to-save-water-in-armenia-41ed8d880d0>

4. Արդարություն. ինչպես է արդյունավետության և խնայողության անն արտացոլվում հասարակության և առանձին ջրօգտագործողների վրա: Արդարության բաղադրիչն անդրադառնում է հետևյալին. ջրային ռեսուրսների բաշխման և վերաբաշխման պատճառով ո՞ր ջրօգտագործողների և ջրօգտագործման ո՞ր ոլորտներն ունեն օգուտ և ծախս: Ի՞նչ ազդեցություն ունի դա զբաղվածության, արտադրողականության, տնտեսական իրավիճակի և տարբեր ոլորտների խոցելի խմբերի վրա: Ընդհանուր առմամբ, արդարությունը վերաբերում է տվյալ տարածքում, գետավազանի սոցիալ-տնտեսական վիճակին՝ ջրային ռեսուրսների բաշխվածությունով պայմանավորված:
5. Վերամշակում. գտնել երկրորդային ջրի օգտագործման խթանման հնարավոր մեթոդները և կիրառել դրանք անհատների և ձեռնարկությունների միջև, որոնք օգտագործում են Արարատյան դաշտի ջրային ռեսուրսները՝ գերազանցելով պահանջվող շեմերը: Այդպիսով կխնայվի ջրի թանկարժեք պաշարը, և այդ ժամանակ հնարավոր կլինի վերացնել նաև հողի անբերրիության/չորության խնդիրը: Այստեղ նույնպես անհրաժեշտ է միջազգային հաջողված փորձի մանրամասն ուսումնասիրություն՝ Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների վերամշակման հնարավոր լավագույն մեթոդները բացահայտելու համար, որոնք կարող են հետագայում պիլոտային ծրագիր դառնալ Հայաստանի այլ մարզերի համար:
6. Շրջանաձև տնտեսություն. Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների և ընդհանրապես հանքարդյունաբերության ոլորտում բարձրացնել իրազեկվածությունը շրջանաձև տնտեսության և բիզնեսի արդյունավետ իրականացման տարբերակների վերաբերյալ: Աջակցել իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ զարգացնելու նոր բիզնես գաղափարներ՝ շրջանաձև տնտեսության և ջրի և այլ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում ներդնելով: Իրականացնել փորձնական ծրագրեր և ցույց տալ լավ արդյունքներ:

4.2.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ջրային ռեսուրսների սակավությունն այսօր հիմնական գլոբալ մարտահրավերներից մեկն է՝ երկրների սոցիալ-տնտեսական համակարգում հանգեցնելով ջրի համար նաև միջոլորտային մրցակցության: Աշխարհում ջրի ճգնաժամի ավելացման հետևանքով գործարար ոլորտը հանդիպում է ջրի հարցում շարունակական աճող ռիսկի, և սա հատկապես վերաբերում է այն բնագավառներին, որոնք էականորեն կախված են ջրօգտագործումից, ինչպիսիք են սննդի, խմիչքի, տեքստիլի և հանքարդյունաբերության ոլորտները: Այս մարտահրավերը ռիսկային է հատկապես հանքարդյունաբերության՝ որպես ջրային ռեսուրսներից կախվածություն ունեցող արդյունաբերական ոլորտի համար: Հաշվի առնելով, որ ջուրը կիրառվում է շինարարության, հանքաքարի արդյունահանման և վերամշակման բոլոր փուլերում, լինի փոշու կառավարման, ֆլոտացիայի, լիչինգի, պոչերի տեղափոխման, թե այլ նպատակով, ջրային ռեսուրսների հասանելիությունը յուրաքանչյուր հանքային նախագծի իրագործելիության հիմնական փոփոխականներից է:

Ջուրը առաջատար գործոններից է նաև հանքարդյունաբերության ոլորտի կոնֆլիկտների վիճակագրության մեջ: Մասնավորապես, Global Atlas of Environmental Justice (EJAtlas) տվյալներով հանքարդյունահանման կոնֆլիկտների 85%-ը առնչվում է ջրի դեգրադացիային:⁵³ Իսկ Համաշխարհային բանկի խմբի ազդակիր համայնքների բողոքներին արձագանքող

⁵³Environmental Science & Policy, Volume 111, September 2020, Pages 42-54, Water policy and mining: Mainstreaming in international guidelines and certification schemes <https://www.sciencedirect.com/science/article/pii/S1462901119310299#bib0335>

անկախ մեխանիզմի՝ Compliance Advisor Ombudsman-ի տվյալներով դիտարկվող դեպքերի 68%-ը նույնպես առնչություն ունի ջրի հետ: ⁵⁴

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ մաքուր էներգիայի տեխնոլոգիաների անցման համար մինչև 2050թ. 500%-ով կանի լիթիումի, կոբալտի, գրաֆիտի արտադրությունը:⁵⁵ Մյուս կողմից, ամենամեծ միջազգային վեց հանքարդյունաբերական ընկերությունների կողմից շահագործվող հանքերի մոտ 70%-ը տեղակայված են ջրասակավ? (water-stressed) երկրներում: ⁵⁶

Այս համատեքստում, բացառություն չէ նաև Հայաստանը: ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2020թ. տվյալներով հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը կազմել է ՀՀ տնտեսության 3,8%-ը, իսկ 2020թ. արտահանման ընդհանուր տեսակարար կշռի շուրջ 32,5%-ը կազմել է «Հանքահումքային արտադրանք»-ը, որն իր մեջ ներառում է պղնձի, մոլիբդենի և այլ մետաղների խտանյութերի արտահանումը:

Ոլորտի գործունեության շարունակականության ապահովումն համար, ջրերի սակավության պայմաններում հարցի լուծման հիմնական մեխանիզմներից մեկը ջրի երկրորդային օգտագործումն է:

Ավելին, անկախ առանձին պետության ունեցած ջրային ռեսուրսների քանակից, հարկ ենք համարում ներկայացնել ոլորտում կրկնակի ջրօգտագործումը խթանելու անհրաժեշտության երեք հիմնավորում, որի պատճառով յուրաքանչյուր պետություն պետք է ակտիվ ներգործություն ունենա տվյալ տեխնոլոգիաների ներդրումը պահանջելու, ինչպես նաև համապատասխան խրախուսող մեխանիզմներ մշակելու համար:

1. Կրկնակի ջրօգտագործմանը նպաստող տեխնոլոգիաների կիրառմամբ հանքարդյունաբերության ոլորտում ոչ միայն լուծվում է ջրի հասանելիության հարցը, այլև ապահովվում է առավել մեծ անվտանգություն: Օրինակ, բարձր արդյունավետությամբ աշխատող խտացուցիչների⁵⁷ կամ այլ սարքավորումների դեպքում պոչամբարներ գնացող ջրի ծավալը փոքրանում է, ինչն ինքնին ավելացնում է կառույցների կայունությունը և բարձրացնում անվտանգության մակարդակը փլուզումներից և արտահոսքից:
2. Ոլորտի, ինչպես մի շարք այլ արդյունաբերական ոլորտների (օրինակ՝ քիմիական, մետալուրգիական և այլն) կողմից օգտագործված և արտանետվող ջրում վտանգավոր նյութերի ծավալը, անգամ թույլատրելի սահմաններում, հաճախ ավելի շատ է լինում քան այլ ոլորտների դեպքում:
3. Հանքարդյունահանող ընկերությունները, ունենալով ջրօգտագործման թույլտվություններ պետությունից, որոշակի հանգամանքների բերումով, ինչպիսիք են որևէ տարի կամ տարվա եղանակին ջրի սակավությունը, պետության կողմից առաջնահերթ խմելու ջրի բավարարման որոշումը կամ արտակարգ իրավիճակը, միևնույնն է կրում են ջրի հասանելիության ռիսկ նույնիսկ ջրային ռեսուրսներով

⁵⁴Water, Mining and Communities: Creating Shared Value through Sustainable Water Management, 2014, IFC, <https://commdev.org/publications/water-mining-and-communities/>

⁵⁵ "Minerals for Climate Action: "The Mineral Intensity of the Clean Energy Transition", <https://www.worldbank.org/en/topic/extractiveindustries/brief/climate-smart-mining-minerals-for-climate-action>

⁵⁶ "Shared Water, Shared Responsibility, Shared Approach: Water in the Mining Sector", ICMM, IFC, page 7 <https://www.icmm.com/en-gb/research/environmental-stewardship/2017/shared-water-shared-responsibility>

⁵⁷Water Conscious Mining (WASCIIOUS),2017, <http://www.diva-portal.org/smash/get/diva2:1108991/FULLTEXT02.pdf>

հարուստ երկրներում, քանի որ պետությունը տվյալ պարագայում չի երաշխավորում ջրի տրամադրումը: Իսկ կրկնակի ջրօգտագործումը հնարավորինս մեղմացնում է նման ռիսկից կախվածությունը ինչպես ընկերությունների աշխատանքի անխափանության, այնպես էլ պետությունների տնտեսական անվտանգության նպատակով:

Իրավական դաշտի թույլտվություններ

Չնայած ջրի հիմնախնդրի գլոբալ բնույթին, միջազգային իրավական ակտերը խնդրի կարգավորմանը անդրադառնում են խիստ հպանցիկ: Միջազգային կոնվենցիաները հիմնականում պարտավորություններ են սահմանում պետությունների, այլ ոչ՝ ընկերությունների համար:⁵⁸ Մյուս կողմից, վերջին տասնամյակում հանքարդյունաբերության ոլորտում ջրի կառավարման առնչվող սկզբունքներ կամ նորմեր են սահմանում միջազգային ասոցիացիաները և ֆինանսական կազմակերպությունները, որոնք կարող են ներդրումների ներգրավման կամ հեղինակության կապիտալի համար ընդունվել մասնավոր ընկերությունների ցանկությամբ: Ուստի, հանքարդյունաբերության ոլորտում ջրօգտագործման պահանջների և կրկնակի ջրօգտագործման իրավիճակի վերաբերյալ հստակ պատկեր ունենալու համար անհրաժեշտ է անդրադառնալ պետության ներքին կարգավորումներին: Իրավական կարգավորումների անհատակությունները նման կապիտալատար բնագավառի ընկերությունների համար հանդիսանում են ուժեղ հակախթաններ զարգացմանն ուղղված նոր նախաձեռնությունների համար, մյուս կողմից՝ դաշտում առկա բացերը կառավարման և վերահսկողության խոչընդոտներ են ստեղծում հենց պետության համար ևս:

Հանքարդյունահանման բնագավառում երկրորդային ջրօգտագործման հարցն անհրաժեշտ է դիտարկել ընդերքօգտագործման իրավունքի (այսուհետ՝ ԸԻ) և ջրօգտագործման թույլտվության շրջանակներում՝ որպես համապատասխան գործունեություններով զբաղվելու իրավասության իրավական անհրաժեշտ հիմքեր:

Մասնավորապես, իրավաբանական անձն ընդերքօգտագործմամբ զբաղվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված⁵⁹ կարգով ներկայացված դիմումի⁶⁰ վերաբերյալ պետական լիազոր մարմնի, այն է՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ ՏԿԵՆ) դեկավարի հրամանով պետք է ստանա ԸԻ: ԸԻ իրենից ներկայացնում է ընդերքօգտագործման թույլտվության⁶¹, նախագծի⁶², ընդերքօգտագործման պայմանագրի⁶³ և լեռնահատկացման ակտի ամբողջություն: Ընդ որում, յուրաքանչյուր նախագիծ պարտադիր պետք է անցնի ՇՄԱԳ փորձաքննություն:

Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ բուն երկրորդային ջրօգտագործմանը (այս եզրույթով) վերաբերելի անդրադարձները օրենսդրության մեջ, այդ թվում՝ հենց ՀՀ ջրային

⁵⁸Environmental Science & Policy, Volume 111, September 2020, Pages 42-54, Water policy and mining: Mainstreaming in international guidelines and certification schemes <https://www.sciencedirect.com/science/article/pii/S1462901119310299#bib0335>

⁵⁹ Այս բաժնում ընդերքօգտագործում տերմինը կօգտագործվի բացառապես օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործմանը հղելով՝ բացառելով ընդերքի հետախուզումը, ներառյալ օգտակար հանածոների հետախուզումը, քանի որ վերջինների դեպքում ջրի օգտագործման կարիք չկա (ներառյալ երկրորդային ջրօգտագործումը):

⁶⁰ «Ընդերքի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-280-Ն (ընդունված 2011 թվականի նոյեմբերի 28-ին), հոդ. 49, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72865>:

⁶¹Նույն փեղում, հոդված 53:

⁶²Նույն փեղում, հոդված 50:

⁶³Նույն փեղում, հոդված 54:

օրենսգրքում, սակավաթիվ են: Ուստի, ընդերքօգտագործման ոլորտում ՋԹ-ին վերաբերող ստորև ներկայացվող երկու խնդիրները անհրաժեշտ է նույնականացնել երկրորդային ջրօգտագործման խնդիրների հետ:

Առաջին հերթին, ընդերքօգտագործման թույլտվություն և ՇՄԱԳ փորձաքննության եզրակացություն ստանալը ինքնին չի երաշխավորում ՋԹ ստանալը, որով կարող է վտանգվել ընդերքօգտագործողի կողմից հանքի շահագործումը՝ հետագայում ՋԹ ստանալու հետ կապված ինչպես օբյեկտիվ՝ օրենսդրությամբ սահմանված կամ փոփոխվող նորմերի կիրարկման խոչընդոտներով, այնպես էլ ոչ օբյեկտիվ կամ վարչարարությամբ պայմանավորված խնդիրներով: Հարցն ավելի սուր է դառնում երկրորդային ջրօգտագործման համատեքստում. վերջինիս համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ պետք է ներդրվեն հանքաքարի մշակման և վերամշակման ողջ համալիրում՝ իրականացնելով տեխնիկատնտեսական հաշվարկներ և դրանք ներառելով փորձաքննվող նախագծում: Ուստի, ի սկզբանե թարմ ջրի ջրառի հնարավոր ծավալները և սահմանափակումները, արտանետման հնարավորությունը, ծավալը կամ դրա արգելքը, ՋԹ-ով սահմանվող այլ հանգամանքները պետք է պետության հետ համաձայնեցվեն նախագծի դեռևս քննարկման, ՇՄԱԳ փորձաքննության փուլում: Սրանով ոչ միայն ընկերությունը ստիպված չի լինի ՋԹ-ի գործոններով պայմանավորված հետագա խնդիրների առաջացման դեպքում վերադառնալ նախագծի փոփոխության և ՇՄԱԳ նոր փորձաքննության, այլև պետությունը և ընդերքօգտագործողը թույլտվությունների քննարկման նախնական փուլում կկարողանան իրատեսական նախագիծ պլանավորել՝ կանխատեսելի դաշտում կառավարելով նաև ջրային ռեսուրսների հասանելիության, բաշխման հետ կապված հարցերը և խուսափելով կոնֆլիկտներից ու դատական վեճերից: Առաջարկվում է ցանկացած ոլորտում, որտեղ նախատեսվող գործունեության համար տնտեսվարողը ներկայացնում է նախագիծ և անցնում ՇՄԱԳ փորձաքննություն, ՇՄԱԳ դրական եզրակացության հետ մեկտեղ համաձայն օրենսդրության տրամադրել նաև ՋԹ:

Ընդերքօգտագործման ոլորտում կրկնակի ջրօգտագործման ուղղակի օրենսդրական պահանջը ներառվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում 2020թ. կատարված լրացումներում⁶⁴, ըստ որի մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ ներկայացնելու դեպքում պարտադիր է ջրի փակ շրջանառու համակարգի կիրառումը, ինչպես նաև տարեկան մինչև 500 հազար տոննա արտադրողականության դեպքում՝ պարտադիր կիրառմամբ միայն պինդ պոչանքների առաջացման տեխնոլոգիան: Սույն բարեփոխումն իրականացվել է ոչ միայն շրջակա միջավայրի և ջրի հիմնախնդիրը հաշվի առնելով, այլև ելնելով հանքարդյունաբերության ոլորտի այն կարևոր առանձնահատկությունից, որ շրջակա աշխարհի համար ռեազենտներով «ադոտոված» ջուրը բավական «թանկարժեք» է նույն տնտեսվարողի համար՝ ոչ միայն ջրային ռեսուրսների ծավալների վերադարձի, այլև հենց դրանց մեջ պարունակվող նյութերը կրկնակի օգտագործելու տեսանկյունից: Նման կարգավորումը երաշխավորում է, որ Հայաստանում նոր հանքավայրերի նախագծման կամ շահագործվող հանքավայրերի նոր նախագծերի ներկայացման դեպքում այս պահանջների կատարմամբ նախկինի համեմատ կնվազեն թարմ ջրի ջրառի ծավալները և կբացառվի ջրային ավազաններ ադոտոված ջրի արտանետումները: Սակայն հարկ ենք համարում նշել, որ գործնականում կան նաև հանքերի շահագործման դեպքեր, երբ ընդերքօգտագործողը չի հանդիսանում հանքաքար վերամշակող, այսինքն, վերամշակման ֆաբրիկան շահագործողն այլ իրավաբանական անձ է: Այս դեպքում վերամշակող հատվածի ընկերությունները Ընդերքի

⁶⁴ «Ընդերքի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-280-Ն (ընդունված 2011 թվականի նոյեմբերի 28-ին), հոդ. 49, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72865>:

օրենսգրքի վերոնշյալ պահանջի հասցեատեր չեն և դուրս են ընդերքօգտագործողների նկատմամբ կիրառվող վերահսկողական գործիքների շրջանակից:

Նման հատվածի ներառման համար հնարավոր է դիտարկել հետևյալ երկու միջոցառումները: Նախ, ընդերքօգտագործողների կողմից հնարավորինս ամբողջական շղթայի ներառում ընդերքօգտագործման նախագծի մեջ՝ խտանյութի և այլ վերջնարտադրանքի ստացման ֆաբրիկայի ընդգրկմամբ: Սա հատկապես հիմնավոր է այն դեպքերի համար, երբ այդ երկու տարբեր իրավաբանական անձինք փոխկապակցված են կամ հանդիսանում են նույն սեփականատերերի ակտիվներ:

Երկրորդ՝ ջրի շրջանառու համակարգերի ներդրման պահանջը սահմանել նաև ընդերքօգտագործող չհանդիսացող, մետաղական բնական պաշարների վերամշակմամբ զբաղվող ընկերությունների⁶⁵ նկատմամբ (այդ թվում՝ ներմուծվող հումքով աշխատող):

Այն, որ նմանատիպ ընկերությունների համար առանց օրենսդրական պահանջի առկայության էլ տնտեսապես էֆեկտիվ է շրջանառու համակարգի ներդրումը, վկայում են ՇՄՆ կայքում հրապարակված երկու ՇՄԱԳՓ եզրակացության օրինակներ՝ «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՄՊԸ-ի Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի⁶⁶ և «Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ի Գլանավորման և կոմպրեսորային համալիրի ջրի փակ շրջանառու համակարգի⁶⁷ մասով:

Հարցերի մեկ այլ խումբ վերաբերում է օրենսդրությամբ հակասական դրույթներին, որոնք հնարավորություն են տալիս կրկնակի ջրօգտագործման փոխարեն նախընտրել (կամ անգամ պահանջի դեպքում՝ խախտել) լրացուցիչ ջրառը կամ ավել արտանետումը, ինչպես նաև չպահպանել ջրի որակը, ինչը հատկապես աղետալի կարող է լինել երկրորդային ջրօգտագործման համար, երբ չսպասիովվեն հաջորդ ջրօգտագործման նպատակներին համահունչ ստանդարտներ:

Այսպես, ջրերի ստանդարտների մասով, մի կողմից ՀՀ ջրային օրենսգրքում բավական խիստ սահմանված է, որ ջրերի ստանդարտները խախտելու դեպքում ջրօգտագործումը համարվում է անօրինական և դրա նկատմամբ կիրառվում է օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն: Մակայն նույն հոդվածում սահմանված է նաև, որ եթե ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված են ավելի խիստ ստանդարտներ, որոնց հնարավոր չէ հասնել գոյություն ունեցող միջոցներով, ապա ջրօգտագործման թույլտվություն ունեցող անձը լիազոր մարմին է ներկայացնում առաջիկա 5 տարիների համար իր գործողությունների աստիճանական բարելավման պլան, որը հանդիսանում է ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մասը:⁶⁸ Նման ձևակերպմամբ դրույթը գնահատողական տեսանկյունից բավական անորոշ է՝ ով է գնահատում սահմանված պահանջի անհնարինությունը, ինչ գործոններ հաշվի առնելով, ինչպես նաև չի հստակեցվում «բարելավման պլան»-ի պահանջները, լիազոր մարմնի կողմից դրա ընդունման կամ

⁶⁵Նախնական ուսումնասիրություն. ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտների վերաբերյալ: Ընկերությունների ցանկը կարելի է գտնել Աղյուսակ 1.2.2-ում

https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Scoping%20Study/EITIArmenia_Scoping%20study_2021_arm%20.pdf

⁶⁶ <http://env.am/storage/files/05-geopromining-gold-ararat.pdf> 2022թ.

⁶⁷ <http://env.am/storage/files/07-rusal-armenal.pdf> 2020թ.

⁶⁸ ՀՀ ջրային օրենսգրքը, հոդված 67

չընդունման հետևանքները: Ուստի, նման դրույթի առկայությունը ինքնին հակախթան է հանդիսանում ՋԹ պայմանները իրականացնելու համար:

Առաջարկվում է խմբագրել քննարկված դրույթը՝ հատակություն մտցնելով լիազոր մարմնի հայեցողական/գնահատողական գործառնությունների, դրանցից բխող հետևանքների մեջ, ինչպես նաև դիտարկել վերոնշյալ դեպքերում կա՛մ այդպիսի ստանդարտներով ՋԹ-ները փոխելու մեխանիզմը (եթե լիազոր մարմինը այն գնահատում է ոչ իրատեսական), կամ, ազգային ստանդարտները որպես նվազագույն պահանջ դիտարկելով, պահպանելով ՋԹ-ներով ստանդարտների անշեղորեն կատարման պահանջը:

Մոնիթորինգ, վերահսկողություն և հաշվետվողականություն

Այդուհանդերձ, անգամ իրավական պարտադիր պահանջների դեպքում անհրաժեշտ է հսկողական մեխանիզմներով դրանց ապահովումը երաշխավորել նաև գործնականում: Կարևորվում է ջրի որակի և քանակի վերաբերյալ տվյալների ստացումը: Որակական տվյալներ հնարավոր է որոշակի դիտակետերից նմուշառման շնորհիվ: Ընկերությունները պարտավոր են նման դիտարկման արդյունքները ներկայացնել ՇՄՆ յուրաքանչյուր եռամսյակ: Ջրի քանակի վերաբերյալ տվյալները նույնպես կարող են հասանելի լինել չափիչ սարքերի միջոցով: Սակայն առկա են որոշ մտահոգություններ մշտադիտարկման և վերահսկողական համակարգի արդյունավետության մասով, որոնք փորձենք ներկայացնել ստորև:

Ջրի քանակի հսկողությունը, ինչպես ջրառի, այնպես էլ արտանետման կետում, չպետք է լինի պարբերաբար, ժամկետային ընդմիջումներով:

Առաջարկվում է վերոնշյալ նպատակի համար կիրառել մոնիթորինգային համակարգեր/ջրաչափեր, հնարավորության դեպքում՝ պետական համապատասխան մարմնին տրված առցանց հասանելիությամբ: Արդյունքում պետությունը կունենա ոչ թե չափման որևէ պահի դրությամբ տվյալ, այլև տվյալների մշտական հասանելիություն, պարզելով օրինակ՝ ջրառի ծավալները գերազանցում են թույլատրվածը, շրջանառու համակարգն աշխատում է սահմանված արդյունավետությամբ, սահմանվածից ավել՝ քանակությամբ արտանետում է իրականացնում, թե՞ ոչ:

Ջրի որակի հսկողության արդյունավետությունը մեծապես կապված է նմուշառման դիտակետերի տեղադիրքի որոշման հետ: Չնայած հանրապետության ամբողջ տարածքի դիտակետերը սահմանվում են ՇՄ նախարարի հրամանով⁶⁹, դրանք ելնում են ընդհանուր տրամաբանությունից. չկան սահմանված սկզբունքներ կամ կանոններ տեղադիրքերը որոշելու համար, ինչպես օրինակ՝ ցանկի թարմացում նոր խոշոր արտադրության շահագործումից մեկ ամիս անց: Երկրորդային ջրօգտագործման տեսանկյունից էական նշանակություն ունի ոչ միայն ջրառի և արտանետման կետերը, որոնք հնարավոր է հիմնական արդյունաբերական տարածաշրջաններում համընկնեն նախարարի ակտով սահմանված ընդհանուր դիտակետերի հետ, այլև այն կետում դիտակետ ունենալը, որտեղից օգտագործված ջուրը մղվում է կրկնակի օգտագործման: ՀՀ գործող օրենսդրությամբ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումը կարող է իրականացվել «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությամբ՝ ըստ ջրօգտագործման նպատակին համապատասխանող ջրին ներկայացվող պահանջների:⁷⁰

⁶⁹ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/laws/Hraman212.pdf> 2021թ.

⁷⁰ ՀՀ Ջրային օրենսգիրք, հոդ. 25.1

Ուստի, առանց նման դիտակետի առկայության, անհնար է վերահսկել երկրորդային ջրօգտագործման ժամանակ ջրին ներկայացվող պահանջների պահպանման հարցը և առնվազն ընդերքօգտագործման ոլորտի համար առաջարկվում է սահմանել, որ ԸԻ համար դիմողների մշտադիտարկման պլանները քննարկելիս լիազոր մարմինը միաժամանակ սահմանի նաև տվյալ հանքի շահագործման առանձնահատկություններից ելնելով առավել համապատասխանող դիտակետեր:

Չնայած ջրի կրկնակի օգտագործման հարցի արդիականությանը, երկրներում, որտեղ թույլ մշակված քաղաքականություն է գործում, ջրի տեխնոլոգիաների նորարարությունները չափազանց քիչ են: Ուստի, պետությունները պետք է խրախուսեն ոլորտի դերակատարներին այդ տեխնոլոգիաները ներդնելու համար, մանավանդ, որ ՄԱԿ-ի կողմից իրականացված գլոբալ վերլուծության արդյունքում գրանցվել է ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերի ու դրանց բյուջեների մեջ մեծ շեղում, իսկ պետությունների 80%-ը նշել են անբավարար ֆինանսների մասին:⁷¹

«Ադտոտողողը վճարում է» տրամաբանությամբ է մշակված նաև ջրահեռացման/արտահոսքի պահանջների խախտման դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի կարգավորումը: Նախ, ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն՝ արգելվում է արտադրական կեղտաջրերի արտանետումը ջրային ռեսուրսի մեջ, եթե տվյալ կեղտաջրի քանակական և որակական չափանիշները չեն համապատասխանում լիազոր մարմնի հաստատած՝ թույլատրելի սահմանային արտահոսքի ընդհանուր և անհատական պահանջներին:⁷² Պետությունը գործող օրենսդրությամբ ընդունում է, որ սահմանված չափով վնասակար նյութերով արտահոսքը ջրային ռեսուրսներ թույլատրելի է և դա իրականացնողներին սահմանել է որպես բնապահպանական հարկ վճարողներ,⁷³ որոշել բնապահպանական հարկի դրույքաչափերը: Ընդ որում, ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատում է ՇՄ նախարարը:⁷⁴ Խնդիրը սակայն այն է, որ յուրաքանչյուր վնասակար նյութի կամ միացության չափաքանակները գերազանցող փաստացի արտահոսքի ծավալի համար կրկին կիրառվում է հարկային գործիք, պարզապես դրույքաչափի եռապատիկ մեծությամբ:⁷⁵ Ստացվում է, որ ընկերությունները ոչ թե պատասխանատվության են ենթարկվում (տուգանք, կասեցում, այլ սանկցիա), այլ տարբեր չափաքանակների համար վճարում են տարբեր դրույքաչափով բնապահպանական հարկ:

Երբ խոսվում է ջրային ռեսուրսի արժևորման (կարևորության ընդգծման) մասին, անհրաժեշտ է ընդունել, որ գործնական մակարդակում ջուրն արժևորելու ամենատուրիղ մեխանիզմը ջրային

⁷¹ Water reuse within a circular economy context, UNESCO [62923], International Centre for Water Security and Sustainable Management, 2020 <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf00000374715.locale=en>

⁷² ՀՀ ջրային օրենսգրք, հոդ. 62.1

⁷³ ՀՀ հարկային օրենսգրք, հոդ. 162

⁷⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18992>

Տվյալ ուսումնասիրության շրջանակից դուրս կարելի է ուսումնասիրել նաև այս ստանդարտի վերանայման անհրաժեշտությունը, որը չի փոփոխվել 2003 թվականից: Համեմատության համար նշենք, որ ջրի որակի ստանդարտների դեպքում ջրային օրենսգրքը պահանջում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնից տարին առնվազն երկու անգամ իրականացնել ստանդարտների մանրակրկիտ ստուգում (վերանայում), ներառյալ՝ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները, առաջարկել դրանցում փոփոխություններ և այդ տեղեկատվությունը ներկայացնում է կառավարություն՝ որպես Ջրի ազգային ծրագրի մաս:

⁷⁵ Նոյն տեղում, հոդված 169:

ռեսուրսի պատճառ արժեքի (գնի որոշման) սահմանումն է: Հայաստանում կրկնակի ջրօգտագործողի համար կրկնակի ջրօգտագործման տրված ջրային ռեսուրսների նկատմամբ բնօգտագործման վճար չի հաշվարկվում,⁷⁶ ինչն արդեն դրական խթան է, սակայն եթե առաջնային ջուրը մաքրողը և օգտագործողը նույն անձն է: Հնարավոր են դեպքեր, երբ ջրառ իրականացրած անձը նույն քանակությամբ ջուր չկարողանա հետ մղել իր իսկ արտադրություն, օրինակ՝ արտադրական օբյեկտները չափազանց հեռու են միմյանցից, չկա օպտիմալ շրջանառու համակարգ, վարտադրության վերջին փուլում ջրի նման պահանջարկ այլևս չկա և այլ դեպքեր:

Օրենսդրությամբ կրկնակի ջրօգտագործման խթաններ սահմանելը կարևոր է այն ոլորտների համար, որտեղ առկա է շրջանառու համակարգի պարտադիր պահանջ: Իսկ պարտադիր պահանջների ներմուծման պահին արդեն գործող նախագծերի դեպքում, ում համար նման պահանջը դեռ պարտադիր չէ, գործուն խթաններ ունենալը վճռական կարող է լինել կամովին ներդրումներ իրականացնելու առումով:

Հաշվի առնելով, որ կրկնակի ջրօգտագործումը ենթադրում է նոր տեխնոլոգիաների ներդրում, ՀՀ ջրային օրենսգիրքը ամրագրել է նաև, որ հարկային օրենսգրքով ջրառ իրականացնող անձի համար սահմանվում են բնօգտագործման վճարների հաշվարկման արտոնություններ համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու դեպքում:⁷⁷ Այս հարցում մեր կողմից առանձնացված խնդիրը երկակի է: Մի կողմից, չնայած այս դրույթը օրենսգիրք ներմուծվել է 2018թ. մարտի 31-ին ուժի մեջ մտած ՀՕ-126-Ն օրենքով, որի անցումային և եզրափակիչ դրույթների համաձայն նախատեսված հարկային արտոնությունները պետք է սահմանվեին հարկային օրենսգրքով՝ վեց ամսվա ընթացքում,⁷⁸ վերջիններս մինչ օրս չեն սահմանվել: Իսկ հարկային օրենսգրքում «Բնօգտագործման վճարի արտոնությունները» գլխի միակ 210-րդ հոդվածի միակ դրույթն է՝ «Բնօգտագործման վճարի գծով արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենքներով»: Մյուս կողմից, քննարկման հարց է, արդյո՞ք բնօգտագործման վճարի մասով արտոնություն սահմանելը իր ազդեցության չափով կարող է հանդիսանալ համապատասխան ներդրումների խրախուսում, թե՞, հակառակը, որոշ իրավիճակներում կարող է և հակառակ ազդեցություն ունենալ՝ ընդհուպ ներդրված ենթակառուցվածքների ոչ արդյունավետ շահագործման համար:

Բերենք մեկ տեսական օրինակ: «Ա» ընկերությունը ընդերքօգտագործող է, որի հանքի շահագործման համար անհրաժեշտ է 10 միավոր ջուր: Ջրի շրջանառու համակարգով վերջինս իրականացնում է 7 միավոր ջրի կրկնակի ջրօգտագործում (7Xկջ) և 3 միավոր թարմ ջրի ջրառ (3Yջրառ): Կատարենք երեք դիտարկում.

1. Նման դեպքերում պետք է արգելվի/բացառվի ցանկացած քանակությամբ արտահոսք (Z), քանի որ եթե ընկերությունը դեռևս իրականացնում է ջրառ, ապա իրեն լրացուցիչ միավոր ջուր է հարկավոր, որը կարող էր շրջանառվել, ոչ թե արտանետվել:
Ուստի, երբ Yջրառ > 0, ապա Zարտահոսք = 0
2. Թարմ ջրի բնօգտագործման վճարն այնքան բարձր պետք է լինի, որ ընկերությունը 7 միավոր կրկնակի ջրօգտագործման հնարավորություն ունեցող համակարգով վատ

⁷⁶ ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 25.1:

⁷⁷ ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 25.1:

⁷⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120447>

կառավարման կամ համակարգի շահագործման ծախսերի պատճառով չաշխատի 7-ից ցածր արդյունավետությամբ:

Եթե $X_{կշ} < 7$, ապա $Y_{շրառ} > 0$ միայն արտակարգ իրավիճակների և վթարների ժամանակ, այն էլ բարձր բնօգտագործման վճարով:

3. Բոլոր մյուս դեպքերում, երբ շրջանառու համակարգն իր 7 միավոր արդյունավետությամբ չի աշխատում, այլ օրինակ 4, ապա ընկերությունը սահմանված 3 $Y_{շրառ}$ -ից բացի ևս 3 միավոր ջրառի կարիք կունենա, որը սակայն արդեն պետք է համարվի անօրինական ջրօգտագործում:

Այս տեսական օրինակով առնվազն քննարկման հարց կարելի է դարձնել բնօգտագործման վճարի մասով արտոնություն սահմանելու իրական ազդեցությունը կրկնակի ջրօգտագործման խթանման համատեքստում:

Վերջին տասնամյակների ընթացքում ջրի կառավարման տնտեսական գործիքները ուշադրության են արժանացել ամբողջ աշխարհում:

Ջրի կառավարման համար տնտեսական գործիքների կիրառումը շատ կարևոր է Հայաստանի համար: Այն հնարավորություն կտա հավաքագրելու լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որ կուղղորդվի ջրի կառավարման միջոցառումների ֆինանսավորման համար, ինչպես նաև կօգնելի փոխել աղտոտողների և օգտագործողների վարքագիծը:

Հաշվի առնելով վերը նշված դրույքաչափերը՝ պարզ է դառնում, որ Հայաստանի ջրային տնտեսության վճարների գանձման համակարգը չի համապատասխանում միջազգային փորձին և չի ապահովում ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու ջրի աղտոտվածության նվազեցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է

1. Գործող բնօգտագործման ցածր դրույքաչափերի և օրենսդրական ոչ հստակ ձևակերպումների պահմաններում ՀՀ ջրային օրենսգրքի 25.1 հոդվածը չի կարող էական ազդեցություն ունենալ և խթանել երկրորդային ջրօգտագործման ծավալների ավելացմանը, առաջարկվում է վերաձևակերպել հոդվածը և թողնել միայն երկրորդային ջրօգտագործման դեպքում բնօգտագործման վճարի գրոյական դրույքաչափի վերաբերյալ սահմանումը
2. Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի՝ կրկնակի/երկրորդային ջրօգտագործման հետ առնչվող անձանց իրավունքները և պարտականությունները ենթադրում են ջրօգտագործման թույլտվություն (այսուհետ՝ ՋԹ):⁷⁹ սակայն ջրային օրենսգրքում ցանկացած ոլորտում կրկնակի ջրօգտագործման կարգավորման համար եզրույթային առումով հստակեցման կարիք ունի, թե ՋԹ-ը կրկնակի ջրօգտագործման համար ջրօգտագործող որ կողմին է վերաբերում՝ թարմ ջուրը օգտագործողին, առաջնային ջրօգտագործողի կողմից վերամշակված ջուր վերցնող անձին, թե երկու կողմերին, ինչպես նաև՝ ինչպես են կանոնակարգվում այդ կողմերի միջև հարաբերությունները: Նման սահմանումների հստակությունը թույլ կտա կարգավորել նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ արդյո՞ք երկրորդ անձն իրավունք կունենա առաջինից վերցնել արդեն

⁷⁹ՀՀ ջրային օրենսգրք, հոդված 1:

օգտագործված ջուրը չմշակված տեսքով և ինքը վերամշակի, թե միայն վերամշակվածը կարող է տրվել երրորդ անձի: Օրինակ՝ եթե երկրորդ անձին անմշակ ջուր վերցնելու հնարավորություն տրվի, ապա վերջինիս համար պետք է սահմանվեն ջուրը ջրօգտագործման համապատասխան նպատակով (կենցաղային, ոռոգման կամ այլ) կիրառելու համար այն պահանջվող ստանդարտի բերելու պարտականությունը:

3. Երկրորդական (կրկնակի) ջրօգտագործման տերմինների փոխարեն ՀՀ ջրային օրենսգրքում և հարակից օրենսդրական ակտերում ամրագրել միջազգայնորեն ընդունված առավել հստակ ձևակերպում: Առաջարկվում է օգտագործել «Ջրի Վերօգտագործում» սահմանումը:
4. Վերանայել ջրօգտագործման վճարների դրույքաչափերը՝ հաշվի առնելով, որ ՀՀ ջրային օրենսգրքի 2022 թվականի հուլիսի 7 փոփոխությամբ արդեն իսկ ներդրվել է անապահով սպառողների ու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության ապահովման հասկացությունները՝ առավել բարձր դրույքաչափեր սահմանել ջրօգտագործման համար, որից հետո հնարավոր կլինի իրատեսական տնտեսական խթաններ ստեղծել երկրորդական (կրկնակի) ջրօգտագործման համար:
5. Արարատյան դաշտում ձկնաբուծական ոլորտին ջրօգտագործման թույլտվություններ տրամադրելուց պարտադիր պայման դարձնել ոռոգման համակարգ ջրի մղումը կամ համապատասխան ոռոգման ենթակառուցվածքների ստեղծումը՝ համապատասխան տվյալ տարածաշրջանի ոռոգման ջրերի պահանջի:
6. Հետևել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի 1148-ն որոշմամբ սահմանված Արարատյան դաշտավայրում գործող ձկնաբուծական տնտեսությունների համար սահմանված ջրօգտագործման և ձկնարտադրության տարեկան ծավալի չափաքանակներին, որը հնարավոր է ապահովել միայն ջրային ռեսուրսների կրկնակի օգտագործման պայմաններում,
7. Քանի որ կան օրենսդրական խնդիրներ ջրօգտագործման թույլտվություններում նշվող պայմանների մասով առաջարկվում է օրենսդրորեն հստակեցնել, թե ինչ պայմաններ կարող են ներկայացվել ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ժամանակ և պայմանների սպառիչ ցանկը հաստատել իրավական ակտով:
8. Սահմանել ոռոգման ջրերի նորմերը, որոնք իրենց հերթին կարիք ունեն պարբերական թարմացման:
9. Ջրի սպառման ծավալները կառավարելու համար ներդաշնակեցնել երկու՝ «հրամայել և հսկելու» և հարկման մեթոդներից լավագույնը հայաստանյան իրականության համար:
10. Չնայած օրենսդրությամբ հստակ, ոչ հայեցողական ձևով սահմանված է բնօգտագործման վճարի դեպքում արտոնություն տրամադրելը, և այն չի սահմանվել, առաջարկում ենք ոչ թե ուղղակիորեն նշված գործիքով արտոնության դրույթ ավելացնել հարկային օրենսգրքում, այլ նախ կատարել տարբեր հարկատեսակների վրա փոփոխություններով ազդեցության գնահատման վերլուծություն:

11. Առաջարկվում է որպես հարկային արտոնություն քննարկել ԱԱՀ-ից ազատման հարցը այնպիսի ապրանքների ներմուծման, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար, որոնք ուղղված են ջրի կրկնակի օգտագործմանը, օրինակ՝ ֆիլտրող, խտացնող սարքավորումներ, խողովակատարեր, քիմիական և այլ նյութեր, որոնք ամրագրված կլինեն ընկերությունների համապատասխան ծրագրերում: Ինչպես արդեն նշվեց, կրկնակի ջրօգտագործման բարեփոխումները պահանջում են կապիտալ ներդրումներ, որոնց ուղղությամբ արտոնությունների սահմանումն առավել արդյունավետ կարող է լինել գործարար համայնքի համար, միևնույն ժամանակ ռիսկեր չառաջացնելով թարմ ջրի առավել «էժանացման» տարբերակով:
12. Բոլոր այսպիսի դեպքերում ևս օգտագործված ջրի մշակումը/որակի լավարկումը և կրկնակի ջրօգտագործումը խթանելու համար անհրաժեշտ է լրացուցիչ շուկայական/իրավական խթաններ մշակել՝ վնասակար նյութերով արտահոսքը բացառելու համար: Առաջարկվում է դիտարկել առաջնային ջրատ իրականացնողին ջրի լավարկում իրականացնելուց հետո այն երրորդ անձին վաճառելու իրավունքի տրամադրումը, այսինքն, այս դեպքում երրորդ անձի՝ որպես կրկնակի ջրօգտագործողի համար ջուրը չի լինի անվճար:
13. Վնասակար նյութի կամ միացության չափաքանակները գերազանցող փաստացի արտահոսքի ծավալի համար կիրառել ոչ թե հարկային տարբերակված դրույքաչափ, այլ պատասխանատվության ենթարկման տրամաբանությանը համահունչ կարգավորում:

